Azg
Ազգ
30 ՕԳՈՍՏՈՍ 2005 ԵՐԵՔՇԱԲԹԻ 153 (3319)

Հայկական «Կիլիկիան» անգլիական Ուայթ կղզում

Այն լուրը, որ Պորտսմուտ է ժամանել 800-900 տարվա վաղեմության մանրակերտների եւ սխեմատիկ գծագրերի հիման վրա Հայաստանի լեռներում կառուցված հնատիպ առագաստանավը, արագորեն տարածվեց շրջակա բնակավայրերում: Եվ Լոնդոնի յուրօրինակ դարպասը հանդիսացող այդ հսկայական նավահանգստի բնակիչները շտապում էին ծովայինների ակումբ, որպեսզի դիտեն այդ պատմական նմուշը եւ նույնիսկ շոշափեն: Տղաներն առանց հոգնելու պատասխանում էին հետաքրքրասեր անգլիացիների բազմաթիվ հարցերին: Պորտսմուտցիները լավ գիտեին, որ մեկ-երկու օր հետո Հայկական հրաբխը (այդպես էին մկրտել «Կիլիկիան») փոխելու է կառանման վայրը եւ մեկնելու է Ուայթ կղզի: Այնտեղ նավն ափ է բարձրացվելու: Պատահական չէ, որ մեկնելու օրը «Կիլիկիան» ձմեռման վայր ուղեկցելու էին եկել հսկայական թվով մարդիկ:

Տես էջ 2

Կազանում «առաջընթաց կամ բեկում» չի արձանագրվել

Երեւանը նախագահների հերթական հանդիպումը համարում է դրական զարգացում

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Կազան-Երեւան

Ադրբեջանի արտգործնախարարն, ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, հայտարարել է, որ նախագահներ Իլհամ Ալիեւի եւ Ռոբերտ Քոչարյանի կազանյան հանդիպման արդյունքները թույլ չեն տալիս ասել, որ բանակցային գործընթացում արձանագրվել է առաջընթաց կամ բեկում: Մյուս կողմից՝ էլմար Մամեդյարովն ընդգծել է, որ նախագահների բանակցությունները միշտ էլ կարեւոր են, քանի որ պետությունների ղեկավարները փորձում են համաձայնեցնել դիրքորոշումները: «Հայաստանից եւ Ադրբեջանից կպահանջվի մեկ կամ երկու շաբաթ՝ վերլուծելու արդյունքները եւ հանդիպման ընթացքում առաջարկված մտքերը, ինչպես նաեւ մտածելու, թե որքանով են կողմերը պատրաստ առաջ շարժվելու», ասել է Մամեդյարովը:

Քոչարյանի եւ Ալիեւի միջեւ զարաբաղյան կարգավորման բանակցությունները շարունակվեցին երկու ժամ: Հանդիպումից հետո ո՛չ նախագահները, ո՛չ արտգործնախարարները եւ ո՛չ էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները մամուլի համար հայտարարություն չարեցին: Պաշտոնական միակ մեկնաբանությունը տվեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղարը: «Հայկական կողմը կազանյան հանդիպումը դրական է գնահատում եւ բանակցային գործընթացում համարում է դրական զարգացում: Արտգործնախարարները կշարունակեն աշխատել նույն ոգով՝ հաշվի առնելով նաեւ այս հանդիպման արդյունքները», ասաց Վիկտոր Սողոմոնյանը:

Տես էջ 5

ԱՅՑԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Արտահերթ նիստը նշանավորվեց ընդդիմության ներկայությամբ եւ չառանձնացավ բովանդակային քննարկմամբ

ՆԵՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Կարծում էի, թե սկսել եք կարդալ փաստաթղթերը: Ցավում եմ, որ դեռ չեք կարդում Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունները եւ: Հորդորում եմ ընթերցել սահմանադրության փոփոխությունների նախագիծը», այս նախադասություններն ԱԺ փոխնախագահ, եվրոինտեգրման հանձնաժողովի նախագահ Տիգրան Թորոսյանը խորհրդարանի երեկվա արտահերթ նիստում ուղղեց պատգամավոր Արշակ Սադոյանին, բայց չէր զլանում նույն հորդորը նիստին ներկա մյուս ընդդիմադիրներին եւ ուղղել: Տարաձայնության յուրաքանչյուր արտահայտություն պրն Թորոսյանը մեծ մասամբ հակադարձում էր հենց կարդալու հորդորով: Այն, իհարկե, չմնաց առանց հակադարձման. «Իսկապես ցավ եմ զգում ձեզ համար: Ինչ վիճակում եք, որ չասեմ սեը՝ մոխրագույնը փորձում եք որպես ճեփ- ճերմակ ներկայացնել: Ու գիտեք, մի փիչ սացվում է», իր տպավորությունը հայտնեց Արշակ Սադոյանը:

Իսկ ընդդիմադիրների եւ կոալիցիայի ներկայացուցիչների համատեղ քննարկման նյութը ՀՀ սահմանադրության փոփոխությունների նախագիծն էր:

Տես էջ 2

Կիպրոսը Բենոնին չի հանձնի Մ. Նահանգներին

Մեր թերթի արձակուրդի օրերին միջազգային լրատվամիջոցները ներկայացրին հերթական սկանդալը ՄԱԿ-ի բարձրաստիճան պաշտոնյաների ոլորտից: Դրանց շարքում այս անգամ առաջին դիրքում հայտնվեց միջազգային մակարդակի վրա հայազգի ամենաբարձր պաշտոնատարը՝ Բենոն Սեւանը: Եվ մեր էլեկտրոնային լրատվամիջոցներն անհնադատաբար կուլ տվեցին եւ իրենց հերթին իբրեւ բացարձակ ճշմարտություն ռադիոհեռուստադիտողներին ներկայացրին նրա շուրջը ստեղծված սկանդալը նույնությամբ, առանց անդրադառնալու, որ միջազգային լրատվամիջոցներն այս անգամ խույս տվեցին ուղղակի նրա բացատրությունները ներկայացնելու պատեհությունից: Մեր ներկա համարի 4-րդ էջում փորձել ենք ինքնաթաքցնվելու այդ հնարավորությունը տալ նրան:

Մինչ այդ, «Ռոյթեր» գործակալությունը տեղեկացնում է, որ Կիպրոսը չի հանձնի մի այլ պետության (այս դեպքում Մ. Նահանգներին) հայկական ծագումով կիպրացի Բենոն Սեւանին, եթե նրա մեղավորությունը հաստատվի «Նավթ պարենի դիմաց» գործում:

«Մեր սահմանադրությունն արգելում է այլ պետության արդարադատությանը հանձնել մեր քաղաքացիներից որեւէ մեկին», բացատրել է Կիպրոսի Հանրապետության արտգործնախարար Ջորջ Իակովուն:

67-այա Բենոնը, ըստ լրատվության, արդեն երկու շաբաթ Կիպրոսում է:

Հ. Օ.

Հայկական ավիաընկերությունը «սեւ ցուցակում»

Բելգիայի տրանսպորտի նախարարությունը երեկ հրապարակել է ավիաընկերությունների «սեւ ցուցակը», որտեղ, Բրյուսելի կարծիքով, չեն պահպանում անվտանգության կանոնները, հաղորդում է Ռոյթերը: Ցուցակի մեջ հայտնվել են 9 ավիաընկերություններ, որոնցից մեկը կոչվում է «Air Van Airlines» (Հայաստան): Քանի որ այս լուրը ուշ էր ստացվել, «Ազգին» չհաջողվեց պարզել, թե որտեղ է գրանցված հայկական «Air Van Airlines»-ը: Ավելի վաղ Ֆրանսիան եւս հրապարակել էր այն 5 ավիաընկերությունների անունները, որոնք անվտանգ չեն:

Ազնավուրը Ուզբեկստանում

ԲՈՒԽԱՐԱ, 29 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Շառլ Ազնավուրը, որին Ուզբեկստանի նախագահ Իսլամ Քարիմովը հավիրել է մասնակցելու «Արեւելքի մեղեդիները» միջազգային երաժշտական փառատոնին, այցելել է Բուխարա եւ այսօր վերադարձել Սամարղանդ: Այդ մասին հայտնել է համաժողովի կազմակերպիչներից մեկը՝ Սիդա Իբրահիմովան: Նրա խոսքով, Շառլ Ազնավուրն ասել է, որ իրականացել է Ուզբեկստան այցելելու իր մանկական երազանքը: 12 տարեկան հասակում ապագա երգիչը կարդացել է «Մեկնենք Սամարղանդ» գիրքը, որը վառ տպավորություն է գործել նրա վրա: Ելույթ ունենալով փառատոնի բացմանը՝ Ազնավուրն ասել է, որ շատ երաժշտական փառատոներ է տեսել իր կյանքում, բայց Սամարղանդինը ցնցել է իրեն իր թափով եւ ազգային մշակույթի նկատմամբ հոգատար վերաբերմունքով: «Արեւելքի մեղեդիները» փառատոնին մասնակցում են 50 երկրների արտիստներ: Բեմահարթակը պատրաստվել է Ուզբեկստանի հին մայրաքաղաք Սամարղանդի Ռեգիստան կենտրոնական հրապարակում, բաց երկնքի տակ: Փառատոնը կավարտվի երեքշաբթի օրը:

Ամերիկյան 4 նահանգ աղետի գոտում

Նավթի գինը հասավ 70 դոլարի

Մեքսիկական ծոցում մոլեգնող եւ երեկ ԱՄՆ հարավային ափերին հասած «Կատրինա» մրրիկը տագնապահար է արել ամերիկյան 4 նահանգների՝ Միսիսիպիի, Ֆլորիդայի, Ալաբամայի եւ Լուիզիանայի բնակիչներին: Այդ նահանգները մրրիկի մոտենալուց մի քանի ժամ առաջ հայտարարվեցին աղետի գոտի: Բնակիչներին կոչ է արվում «լրջորեն վերաբերվել վտանգին» եւ մեկնել ապահով վայրեր:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ «Կատրինան» ունի վտանգի բարձրագույն՝ 5-րդ կարգ: Օդերեւութաբանների կարծիքով, այս մրրիկը կարող է առավել կործանարար լինել, քան 1992 թ. ԱՄՆ տարածով անցած «Էնդրյու» 5-րդ կարգի մրրիկը: Այն ժամանակ զոհվել էր 43 մարդ, իսկ նյութական վնասը կազմել էր ավելի քան 31 միլիարդ դոլար:

Ենթադրվում է, որ «Կատրինան» կարող է անօթեւան թողնել 1 մլն մարդու: Եթե Նոր Օռլեանում մրրիկը չթուլանա, ապա ծովի մակերեւույթից ցածր գտնվող այդ քաղաքի բոլոր շինությունների 60-80 տոկոսը ջրածածկ կլինի եւ կավերվի: Քաղաքապետը բոլոր օռլեանցիներին հորդորել է հեռանալ քաղաքից: Ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն հեռացել, մնում են հատուկ ապաստարաններում:

Ֆրանսիայի տվյալներով, քաղաքի 485 հազար բնակիչների մեծ մասը մեկնել է: Իսկ ընդհանուր առմամբ տարհանվածների թիվը հասնում է մեկուկես միլիոնի: Իրենց տները չլքած բնակիչները պարտավոր են ունենալ 3-5 օրվա ջրի, սննդի եւ վառելիքի պաշար:

Մրրիկի հետեւանքով Մեքսիկական ծոցում կիրակի օրվանից լիովին դադարեցված են նավթարդյունահանման աշխատանքները, փակ է Լուիզիանայի նավթային նավահանգիստը: Նավթարդյունահանող ընկերությունները Մեքսիկական ծոցից դուրս են բերել իրենց բոլոր աշխատակիցներին: Երեկ Նյու Յորքի ապրանքահումքային բորսայում մեկ բարել նավթի գինը հասել է 70 դոլարի: Սակարկությունների մասնակիցները երկյուղներ ունեն, որ շարունակվող մրրիկը մեծ վնասներ կպատճառի, եւ որ նավթահանույթը Մեքսիկական ծոցում հնարավոր կլինի վերսկսել մի քանի օր հետո միայն: Այնտեղ կենտրոնացված է ԱՄՆ-ում արդյունահանվող նավթի ամբողջ ծավալի 1/4-ը:

Պ. Ք.

ԲՈՂՈՔՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԸ

Վերին Գեսաշենը խմելու ջրից ամբողջությամբ զրկվելու վտանգի առջեւ է

Խմելու ջրից զրկվելու վտանգն էր երեկ Գեղարքունիքի մարզի Վերին Գեսաշեն գյուղի մի քանի հարյուր բնակիչների բերել կառավարության շենքի մոտ: Մոտ 5 հազար բնակիչ ունեցող գյուղի ներկայացուցիչներն իրենց դժգոհությունն էին հայտնում ինչպես իրենց հարեւան ներքին գեսաշենցիներից, որոնց կողմից կառուցվող ջրագծի հետեւանքով իրենք մնալու են առանց ջրի, այնպես էլ այդ, վերին գեսաշենցիների բնորոշմամբ, ամբարիշտ ջրագիծ կառուցելու եւ իրենց սպասվող վիճակի նկատմամբ մարզպետարանի, ջրային տնտեսության կոմիտեի, կառավարության անտարբեր վերաբերմունքից:

Ասատուր Մխիթարյան, Վերին Գեսաշենի ավագանու անդամ. - Վերին եւ Ներքին Գեսաշեն գյուղերի համար նորվեգական կազմակերպությունը կառուցել է եղել ջրագիծ, որտեղից երկու գյուղեր պետք է ստանան իրենց ջուրը: Այդ նպատակով ներքին գեսաշենցիները իրենց հատկացված տեղից 4-5 տարի առաջ խողովակ են կառուցել իրենց ջուրը տանելու համար: Սակայն հիմա նրանք այդ խողովակը թողել են, ամբարիշտ նախագիծ են բերել եւ սկսել են նոր ջրագիծ կառուցել ընդհանուր ջրատարի ամենաբարձր ճնշման կետից եւ մեծ տրամաչափով, որը եթե կառուցվի, մեր գյուղը կմնա առանց ջրի: Մինչդեռ այդ ջրագծից պետք է օգտվեն երկու համայնքները հավասարապես: Մեր բողոքներից հետո մեկ-երկու օր դադարեցրին աշխատանքները, բայց հիմա նորից շարունակում են: Փաստորեն մարզպետը արտաքնապես ցույց է տալիս, որ պահանջում է դադարեցնել, բայց իրականում հրահրում է, որ կառուցեն:

Մենք համաձայն ենք, որ ինչպես նախատեսված է 1996 թ. կազմված նախագծում, նրանք էլ, մենք էլ հավասարաչափ ջուր ստանանք: Սակայն Ներքին Գեսաշենում մտածում են, որ իրենց ջուրը կարող է չբավարարել, որի հետեւանքով, սակայն, մենք ընդհանրապես կմնանք առանց ջրի: Այդպես եղավ ոռոգման ջրի հետ, երբ ներքին գեսաշենցիները դարձյալ արգելք հանդիսացան մեր գյուղի մոտ 500 հա հողերը ոռոգելուն: Այժմ այդ կարտոֆիլի դաշտերը մնացել են առանց ոռոգման ջրի: Հիմա խնդրում ենք կառավարությանն ու նախագահին, որ մեզ փրկեն առանց խմելու ջուր մնալու հեռանկարից: Մինչեւ այժմ դիմել ենք մարզպետին եւ մարզային դատախազությանը: Մեզ պատասխանում են, որ շինարարությունը պետք է դադարեցվի, բայց դա տեղի չի ունենում: Այս պահին շինարարությունը շարունակվում է: Փաստորեն կտրում են մեր զարկերակը:

Մինչ կառավարության շենքի առջեւ հավաքված գյուղացիները շարունակում էին բողոքել հարեւան գյուղի գործողություններից եւ իշխանությունների անգործությունից, Վերին Գեսաշենի գյուղապետի գլխավորած պատվիրակությունը կառավարությանը ներկայացրեց նրանց մտահոգող խնդրի մանրամասները:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Արտահերթ նիստը նշանավորվեց ընդդիմության ներկայությամբ եւ հառանձնացավ բովանդակային քննարկմամբ

1-ին էջից

Այն, ինչպես եւ խոստացվել, ապա որոշվել էր, հեռարձակվեց հանրային հեռուստատեսությամբ՝ հրապարակայնություն եւ իրազեկում ապահովելու նպատակով: Արդյունավետությունը մասամբ ապահովվեց, քանի որ խորհրդարանականները մերթ ընդ մերթ մոռանում էին ֆնարկվող նյութը եւ հստակ հարց ու պատասխանից հեռանում մինչեւ սեփական ճշմարտացիությունը ապացուցելու ձգտում: Հասարակության լայն շրջանակների համար ըստ էության ֆիչ հստակեցումներ եղան, ի հաշիվ երկուստեմ փորձերի՝ պարզելու, թե Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում հայ ընդդիմադիրները, թե՞ կոալիցիայի ներկայացուցիչներն են ավելի ճիշտ աշխատել: Թերեւս ավելի կարեւոր էր յուրաքանչյուր փոփոխության բերելիք դրական բացասականի կշռումը: Այս անելու կոչեր բազմիցս բարձրաձայնեց Տիգրան Թորոսյանը. «Յուրաքանչյուրս պետք է ներկայացնի, հիմնավորի, թե ինչով է գործող սահմանադրության դրույթը զիջում նախագծի համապատասխան դրույթին: Պարզաբանենք՝ այս նախագիծը հետագա զարգացման դուռ բացո՞ւմ է, թե ոչ: Եթե այո, ապա մերժելը կնշանակի մերժել նաեւ երկրի հետագա զարգացումը կամ առնվազն մի քանի տարով հետաձգել»:

Սահմանադրության փոփոխությունների նախագիծը ինչպես հիմնական զեկուցող Սիեր Շահգելդյանի, այնպես էլ հարակից զեկուցող Տիգրան Թորոսյանի գնահատականով, արմատապես փոփոխվել է: Եվ գլխավոր քարտուղարի ներկայացուցչի գնահատականն էլ դրական էր. «Նիստին ընդդիմության մասնակցությունը ողջունելի է, քանի որ դա կառուցողական մոտեցում է: Շատերն են թերահավատ, բայց նախագծի տեքստը լավն է: Անհնար է սահմանադրության նման ընդգրկուն փաստաթղթում կատարելություն ունենալ: Այն, ինչ կա, արժեքավոր է եւ ընդունելի»: Այս գնահատականը Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Բուֆիֆոն պետք է ներկայացներ, սակայն պատասխանին հակառակ չէր ներկայացել երեկվա նիստին, տեղեկացման համաձայն, չվերթի ուշացման պատճառով: Վենետիկի հանձնաժողովի նման գնահատականն Աղասի Արզակյանը համարեց անտեղի դաս եւ ընդգծեց. «Այսօր տոնալ անվստահության մթնոլորտ է տիրում երկրում: Անհրաժեշտ է վստահության մթնոլորտը վերստեղծել: Իսկ ԵԽԽՎ-ն դահիճին ու զոհին նույն նժարին դրած հավասարազոր հաթաթա է տալիս»:

Պրն Արզակյանը գտնում է, որ Ազգային միաբանության առաջարկն է ելք մնում՝ իրավասությունները վայր դնել եւ արտահերթ ընտրություններ գնալ: Արտաշես Գեղամյանն իր ելույթը կառուցեց նախկին եւ ներկայիս իշխանությունների մեղադրանքների շուրջը՝ միաժամանակ դրանք «համեմելով» ինքնագովազդի իրեն հատուկ եղանակներով: Պրն Գեղամյանի ելույթի եզրակացությունը՝ «Եթե պատգամավոր չլինեի, մտքովս չէր անցնի, որ այս ֆնարկումները Հայաստանում են ընթանում, բարեփոխումներից են խոսում ու այդ ընթացքում երկիր ենք կորցնում», հնչեց սկզբից:

Երեք տասնյակից ավելի պատգամավորների ելույթները եւ ընդհանրապես սահմանադրության փոփոխությունների նախագծի երկրորդ ընթերցումը կշարունակվեն այսօր, իսկ երեկվա ընթացքում նիստի գոնե առաջին կեսին ակնհայտ էր ոչ այնքան լուրջ մոտեցումը ընդդիմադիր պատգամավորների նկատմամբ: Ըստ էության ընդդիմադիրներն ու կոալիցիայի ներկայացուցիչները համարժեք պատասխանություն դրսեւորեցին՝ ֆնարկվող նյութի բովանդակությունը վերածելով փոխադարձ վերաբերմունքի արտահայտման հնարավորության:

Հայկական «Կիլիկիան» անգլիական Ուայթ կղզում

1-ին էջից

Անձնակազմը նման եղանակ չէր տեսել ճանապարհորդության ամբողջ ընթացքում: Կղզին Պորտսմուտից 6 մղոն (11 կմ) հեռավորության վրա է, այնպես որ հարկավոր էր դուրս գալ բաց ծով, որպիսին ըստ էության Լա Մանշ նեղուցն է: Բանը ոչ թե մբուշն էր կամ սովորական ուժեղ քամին եւ ալեկոծությունը, ոչ միայն օդի սառնությունը եւ ոչ էլ կարկուտը, այլ նավի տախտակամածի վրա աղմուկով ընկնող բազմակողմ սառցակտորների հսկայական չափերը: Դժվար է բացատրել բնության ըմբոստությունը հենց այն պահին, երբ պատրաստվում էինք նավը ցամաք բարձրացնել, եթե, իհարկե, որեւէ հակաբնական բան չկա դրանում: Եվ միտքիկան քամահրելով ակամա մտածում եմ, որ բնությունը բողոքում է: Այդ կղզին իրենով ասես ծածկում է Պորտսմուտի ծովախորը: Կղզին խտաբնակ է, ունի մի քանի բնակավայր: Ամենամեծը Կաուս քաղաքն է: Հենց այնտեղ էլ «Կիլիկիան» կանգկացնի մոտ 9 ամիս: Իրոք, ինչ-որ հակաբնական բան կա, որ նավը կանգնած է ափին: Բայց ինչ արած, Ուայթ կղզին Սուրբ Ղազարը չէ, որտեղ միայն հայեր են ապրում, որոնք սիրով եւ երկյուղածությամբ հետեւում էին ջրում կանգնած հայկական նավին: Եվ ամեն օր նրանք ջուրը դուրս էին մղում պոմպերով: Իսկ այստեղ հուսալիության համար, կամա թե ակամա, հարկավոր է ափ բարձրացնել մեր լողացող դինոզավրը: Բայց նախ հարկավոր է այն ազատել բալաստից:

Հայտնի է, որ «Կիլիկիայի» հատակին խնամքով դարսված են 20 տոննա քարով չուգունե կոճղեր, որոնցից յուրաքանչյուրը կշռում է 7-8 կգ: Նավի վրա մնալու է 4 տոննա բեռ: 16 տոննան հարկավոր է բարձրացնել տախտակամած, ապա հասցնել նավամատույց եւ քարշ տալ 70 մ: Այսինքն՝ հարկավոր է ձեռքից ձեռք փոխանցել շուրջ 1500 ժանգոտ ու ծանր աղյուսներ: Նավից դուրս բերեցինք ամբողջ հանդերձանքը, առագաստները, անձնական իրերը, ճնելու պարագաները: Տեղում թողեցինք մեր հայտնի, շատ ծանր առագաստափայտը եւ ղեկաթիռը:

«Կիլիկիան» ներկայումս կանգնեցված է գրեթե կես մետրանոց հենակոճղերի վրա: Հանդերձանքի մի մասը եւ իրերը դարսված են մեծ սենյակում: Ջեւակերպել ենք պայմանագրային փաստաթղթերը: Եվ օգոստոսի 27-ի առավոտյան «Կիլիկիայի» անձնակազմը լաստանավով մեկնեց Սաութհեմպտոն, որտեղ սպասում էին ՀՅԴ տեղական կոմիտեի ակտիվիստները՝ Ժորժ Հովհաննիսյանի գլխավորությամբ: Մեզ մեծ օգնություն ցույց տվեցին հայկական համայնքի ներկայացուցիչներ Բագրատ Նազարյանը եւ Գառնիկ Ամիրյանը: Ամենը խոստացան կանոնավորապես նավ այցելել, որպեսզի «Կիլիկիան» չձանձրանա օտարության մեջ: Թեեւ, ինչպես հետո պարզվեց, կղզին այնքան էլ օտար չէ: Այն հարցին, թե ինչ է նշանակում Ուայթ կղզու անունը, ծովայիններ ակումբի տերերը, ասես խոսքերը մեկ անելով, պատասխանում էին. «Դա ոչ ոք չգիտի»: Անվանումը համահունչ է անգլերեն White («Սպիտակ») բառին: Սակայն միանգամայն ուրիշ ձեւով է գրվում: Անգլիացի զբոսանավորներից մեկն առաջարկեց կղզին անվանել Կիլիկիա, թեկուզ՝ այնտեղ հայկական նավի ներկայության ժամանակամիջոցում: Բայց պարզվեց, որ այստեղ եւս բարդություն կա տառադարձության հարցում. անգլերեն Կիլիկիան հնչում է Սիլիսիա, իսկ դա մեզ այնքան էլ չի գոհացնում: Ուստի որոշեցինք ամեն ինչ թողնել առաջվա պես, ամենայն բարիք մաղթեցինք անգլիական Ուայթ կղզուն եւ այնտեղ մնացած հայկական «Կիլիկիա» նավին:

Կհանդիպենք 2006 թ. մայիսին:

ՅՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Խեղդվել է լճում

ԱԻՎ լրատվական կենտրոնից տեղեկացնում, որ օգոստոսի 26-ին, ժամը 21:40-ի սահմաններում Այոր լճում խեղդվել է Արմավիրի մարզի Արաքսյոս գյուղի բնակիչ, 1957 թ. ծնված Համբարձում Հովսեփյանը:

Դիակ բնակարանում

Օգոստոսի 27-ին, ժամը 00:51-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Բաբաջանյան փողոցի 51/1շենքի բնակարաններից մեկի դուռը չի բացվել ու զգացվել է տարօրինակ հոտ: Փրկարարները դուռը բացել են ու հայտնաբերել անձը չպարզված, ազգությամբ ռուս, մոտ 70 տարեկան կնոջ դիակ:

Հայտնաբերվել է կնոջ դիակ

Օգոստոսի 28-ին, ժամը 08:30-ին, Նոր Նորքի 9-րդ զանգվածի 15 շենքին կից կիսաձածկի վրա փրկարարները հայտնաբերել են 1943 թ. ծնված Ամալյա Մաքերտչյանի դիակը: Հարուցվել է քրեական գործ:

Մ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԳ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Լրագրողների սենյակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայություն / հեռ 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայություն / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

Երեւանի փոխքաղաքապետ Կամո Արեյանը երեկ հայտարարեց, որ սոցիալական այն բոլոր ենթակառուցվածքները, որոնց գործունեությունն այս կամ այն չափով առնչվում է դպրոցներին, մինչեւ ուսումնական տարվա սկիզբն արդեն ավարտել են նախապատրաստական աշխատանքները: Ամենաբաթյա ճեղազրույցը ցուցանիշների, ոլորտների ու կատարողականների ավանդական հաշվետվություն էր՝ համեմված լավատեսական կանխատեսումներով:

Նոր ուսումնական տարում աշակերտների թիվը մայրաքաղաքի դպրոցներում պակասել է 5 հազար 871-ով

2006 թվականին ուսուցիչների աշխատավարձը կհասնի 59 հազար 390 դրամի

Դպրոցների տնօրենների մասնակցությամբ ուսումնասիրվել են ջրամատակարարման, էներգամատակարարման համակարգերը, մալուխային ցանցերը, բուժկետերը համալրվել են առաջին անհրաժեշտության պարագաներով ու դեղորայքով: «Դպրոցներն անխափան գրաֆիկով ջուր կստանան», ջրմուղի անունից խոսացավ փոխքաղաքապետը:

Քաղաքային պետավտոտեսչությունը սեպտեմբերի առաջին տասնօրյակում հերթապահություն ու միջոցառումներ կիրականացնի դպրոցների մերձակա տարածքներում, եւ ընդհանրապես դպրոցական առաջին շաբաթում երթեւեկի անվտանգության հանդեպ ավելի աչալուրջ կլինի:

Պետբյուջեն 1 մլրդ 200 մլն դրամ է հատկացրել քաղաքապետարանի ենթակայության 22 դպրոցների հիմնանորոգումների ու վերանորոգումների համար: Եվս 376 մլն դրամ այդ նպատակին հատկացրել է սոցներդրումների հիմնադրամը: Պետբյուջեի եւ դարձյալ սոցներդրումների հիմնադրամի միջոցներով լոկալ ջեռուցում ունեցող դպրոցների թիվը ձմռանը կհասնի 42-ի: Այս տարի լոկալ ջեռուցում կունենան եւս 22 դպրոցներ:

Քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող ուսումնական 206 հաստատություններից 190-ը հանրակրթական դպրոցներ են (10-ը՝ հատուկ գիշերօթիկ, 5-ը՝ արհեստագործական դպրոցներ)՝ 10 հազար 283 ուսուցիչներով:

Այս տարի աշակերտության թիվը նախորդ տարվա 132 հազար 374-ի փոխարեն կազմում է 126 հազար 503, այսինքն պակասել է 5 հազար 871 աշակերտ: Առաջին դասարան կհաճախի մոտավորապես 10 հազար 200 երեխա: Առավել ճգնաժամային տվյալներ կհրապարակվեն 10 օր անց: Գործում է հանձնաժողով, որը զբաղվում է 6,5 տարին չլրացած երեխաների առաջին դասարան ընդունելության հարցերով: Ի դեպ, այս տարիի երեխաների դիմումները բավական շատ են:

Նոր ուսումնական տարում նույն դասընթացը երկրորդ տարին կանցնեն 195 երկտարեցիներ:

Վերահրատարակվել են 29 անուն դասագրքեր, որոնցից առաջին դասարանցիներին անվճար կտրվեն հայոց լեզվի, մայրենիի, մաթեմատիկայի դասագրքերն ու այբբենարանը: Երկրորդ եւ երրորդ դասարաններում մայրենիի եւ մաթեմատիկայի դասագրքերը եւս անվճար կտրվեն: Հայոց լեզվի դասագրքերն անվճար կստանան նաեւ 9-րդ եւ 10-րդ դասարանցիները, քանի որ այդ դասագրքերն արդեն 4 տարի օգտագործվել են, բավական մաշված են: Մնացած դասագրքերի համար կգանձվեն վարձակալական վճարներ:

2005 թվականին պետբյուջեից 8,6 մլրդ դրամ է հատկացվել ողջ դպրոցական համակարգին: 2006 թվականին, ըստ նախնական հայտի, կրթական համակարգին տրամադրվող պետտավերի ծավալը կկազմի 9 մլրդ 959 մլն դրամ: Այս տարեսկզբին ուսուցիչների միջին աշխատավարձը կկազմի 51 հազար 150 դրամ, 2006 թվականի հայտի շրջանակներում, ըստ Արեյանի, այդ թիվը կհասնի 59 հազար 390 դրամի:

Մինչեւ սեպտեմբերի 15-ը դպրոցներում կհստակեցվեն աշակերտների կոմպլեկտավորման բազայի ցուցանիշները, ըստ որոնց, եւ հաշվի առնելով նաեւ ուսուցիչների ծանրաբեռնվածությունը, 1 աշակերտի ֆինանսավորման սկզբունքով դպրոցներին հատկացումներ կարվեն: Դպրոցական համազգեստին վերադառնալու վերաբերյալ որեւէ քննարկում, պարտադրանք ու առաջարկ ոչ քաղաքապետարանը, ոչ նախարարությունը չեն իրականացրել՝ այս կարեւոր խնդրի լուծումը թողնելով դպրոցի տնօրենության հայեցողությանը:

Մի խոսքով, թվերի, ծրագրերի ու կատարողականների շրջանակում մայրաքաղաքի՝ քաղաքապետարանի ենթակայության դպրոցները պատրաստ են նոր կրթական տարվան: Արբագումների անհրաժեշտությունը հընթացս կերեւա:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵՎԱՆ

ԱրՊՀ դիմորդների մակարդակն այս տարի բարձր էր

ԼՂՀ հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահ, ԱրՊՀ ռեկտոր **Համլետ Գրիգորյանի** գնահատմամբ՝ նախորդ տարիների համեմատությամբ այս տարվա ընդունելության քննությունները անցել են ավելի կազմակերպված: Այս մասին նա հայտարարել է օրերս կայացած մամուլի ասուլիսում: Ռեկտորը դա բացատրել է հանձնաժողովի կողմից քննությունների նախօրյակին դիմորդների եւ նրանց ծնողների հետ տարված անհրաժեշտ բացատրական աշխատանքներով: Ինչպես նախօրոք հայտարարվել էր, համալսարան են ընդունվել նաեւ որոշ մասնագիտությունների գծով ոչ պատշաճ գիտելիքներով դիմորդներ: Հ. Գրիգորյանը դա բացատրեց գյուղատնտեսական մասնագիտությունների նկատմամբ շահագրգռություն առաջացնելու նպատակադրությամբ, ինչպես նաեւ՝ համալսարանի տնտեսական սուղ պայմաններով պայմանավորված: Պետպատվերի շրջանակներում պետությունը բուհի կարիքները բավարարում է ուրջ 30 տոկոսի չափով, ուստի 5000 ուսանող եւ ավելի քան 500 աշխատակից ունեցող բուհը ստիպված է գնալ այդ քայլին:

Ըստ Հ. Գրիգորյանի՝ համալսարանում իրականացվում են նաեւ սոցիալական ծրագրեր: Վճարովի համակարգից մեծ քանակությամբ ուսանողների թոշակ է տրվում, որը տարվա կտրվածքով կազմում է նրանց վարձավճարի չափը: Չեղչ է սահմանված հեռակա համակարգում սովորող՝ զոհված ազատամարտիկների երեխաների համար: ԱրՊՀ-ն տարածաշրջանում թերեւս միակ բուհն է, որը կարիքավոր ուսանողներին աջակցում է հանրակացարանով: Զոհված ազատամարտիկների երեխաներին հատկացվում է անվճար: Չեղչ է սահմանված նաեւ համալսարանում աշխատողների երեխաների համար: Բացի այդ, առաջնակարգ բուհերից հետ չմնալու նպատակով համալսարանում իրականացվում են շինարարական եւ կահավորման աշխատանքներ:

Ռեկտորը տեղեկացրեց, որ այս տարի ԱրՊՀ շրջանավարտների թիվը նախորդ տարվա համեմատությամբ միայն էր 200-ով, իսկ դիմորդների թիվը՝ 50-ով ավելի, ինչը նա գոհացուցիչ համարեց այն առումով, որ ԱրՊՀ-ի նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է:

Ընդհանուր առմամբ ԱրՊՀ են ընդունվել 738 հոգի, որից պետպատվերով՝ 248 հոգի՝ նախատեսված 220-ի փոխարեն: Ավելացումը տեղի է ունեցել զոհված ազատամարտիկների երեխաների ընդունելության հաշվին:

Ռեկտորը դրական գնահատեց ընդունելության քննությունների արդյունքները: Սպորտային երեւույթների վերաբերյալ նա ասաց, որ դրանց 70 տոկոսը վերացված է. կազմակերպչական առումով ամեն ինչ արվում է, որպեսզի այդ խողովակները փակ լինեն: Հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահը, այնուհանդերձ, չժխտելով սպորտային երեւույթների գոյությունը, դրա լիարժեք վերացումը համարեց ոչ միայն համալսարանի խնդիրը: Դա սոցիալական չարիք է, որը համապետական մոտեցում է պահանջում:

Բողոքարկող հանձնաժողովը, ըստ ռեկտորի, համարյա անելիք չի ունեցել: Եղել է 4-5 դեպք, երբ տեխնիկական պատճառներով փոխվել են միավորները:

Հավաստագրերով (առանց ընդունելության քննությունների) ընդունելության կարգը, որը մտցվել էր հենց իր՝ Հ. Գրիգորյանի նախաձեռնությամբ, երբ զբաղեցնում էր ԼՂՀ ԿՄՍ նախարարի պաշտոնը, նույնպես այդ նպատակն էր հետապնդում: Պարզվում է, սակայն, որ հավաստագիր տալու հսկողությունը թուլացել է դպրոցներում:

Առհասարակ, ընդունելության քննությունների ներկա կարգին Հ. Գրիգորյանը դեմ արտահայտվեց: Նրա կարծիքով, պետք է ընտրել մի ձեւ, որ, իրոք, վերացվեն ընդունելության քննությունները: Համալսարանը պետք է իր համար բալային շեմ հայտարարի տարբեր մասնագիտությունների գծով, եւ այն բավարարող դիմորդներն ընդունվեն առանց քննությունների: ԱրՊՀ պարագայում, Հ. Գրիգորյանի խոսքերով, դա հնարավոր է իրականացնել շատ շուտ: Պարզապես հարկավոր է մշակել համապատասխան մեխանիզմներ:

Անդրադառնալով դիմորդների մակարդակին՝ Հ. Գրիգորյանը նշեց, որ այս տարի դիմորդների որակական ասպիճանը բարձր էր նախորդ տարիների համեմատությամբ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Գիւմրիի «Յոյս» մանկատան մէջ

23 օգոստոսի առաւօտեան միացեալ այն փոքր խումբին, զոր կազմեց Թորոս Պողոսեանը, որ եկած էր Աւստրալիոյ Սիտնի քաղաքէն օգնութիւն հասցնելու Գիւմրիի «Յոյս» մանկատունին:

Արդարեւ, Սիտնի քաղաքի ՀԲԸՄիութեան մասնաճիւղը վերջին երեք տարիներուն ինքնեկ կերպով կ'օժանդակէ այս մարդասիրական հաստատութեան, որ գործի լծուած է 2000 թուականի դեկտեմբեր 2-էն սկսեալ, պատսպարելով այժմ 68 գիւմրեցի մանուկներ ու պատանիներ:

Մենք այս տարի գտնուելով Աւստրալիա, ներկայ եղանք նուիրահաւաքի այն երեկոյին, զոր կազմակերպած էին Բարեգործականի Սիտնիի մասնաճիւղի վարչականները օրուան հաւաքուած գումարը Գիւմրիի «Յոյս» մանկատուն հասցնելու նպատակաւ:

Ահա Սիտնիի Բարեգործականի վարչականներէն Թորոս Պողոսեանը իր հետ բերած էր նշեալ երեկոյի ընթացքին գոյացած 3700 դոլարի գումարը:

Գիւմրիի «Յոյս» մանկատան մէջ մեզ ընդունեց հաստատութեան տնօրէն Ռուբէն Մարկոսեանը իր աշխատակիցներով:

Տնօրէնը անմիջապէս մանկատուն հրաւիրեց Գիւմրիի հեռատեսիլի աշխատակիցներ, որոնք նկարահանեցին այս հանդիպումը: Մենք եղանք երախաներու հետ: Շրջեցանք բաժանմունքները, հիտասիրուեցանք, զրոյցներ ունեցանք թէ սաներու, թէ հաստատութեան աշխատակիցներուն հետ:

Բարի գործ մըն է կատարուածը: Բայց կը հաստատենք, թէ մանկատունը շատ կարիքներ ունի: Երանի թէ Սիտնիի ՀԲԸՄիութեան մասնաճիւղին նման սփիւռքէն այլ անձեր եւ հաստատութիւններ եւս օգնութեան փութան «Յոյս» մանկատան:

ԹՈՐՈՍ ԹՈՐՈՒՆԵՆ
Երեւան

Կրթաթոշակ վճարովի համակարգ ընդունված ուսանողների համար

ՀՕՖ-ն աջակցում է սոցիալապես անապահով եւ առաջադեմ ուսանողներին

Երեւանի պետական համալսարանի, Երեւանի պետական տնտեսագիտական ինստիտուտի եւ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մի շարք ֆակուլտետների դիմորդներ, որոնք այս տարի ընդունվել են վճարովի համակարգ, կարող են մասնակցել Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) «Մաթետսյան կրթավճարի» մրցույթին: Հաղթող 10 դիմորդների ուսման վարձը կվճարի Հայ օգնության ֆոնդը, այս մասին երեկ **«Ազգի»** հետ զրույցում ասաց ՀՕՖ-ի լրատվության պատասխանատու **Լետն Լաճիկյանը**: Մրցույթին կարող են մասնակցել նրանք, ովքեր ունեցել են բարձր առաջադիմություն դպրոցում, ավարտական քննությունները հանձնել են գերազանց, ընդունելության քննությունները՝ բարձր գնահատականներով: Մրցույթը վերոհիշյալ բուհերի տնտեսագիտություն, կիրառական մաթեմատիկա, կոմպյուտերային համակարգեր եւ ինֆորմատիկա, իրավագիտություն, միջազգային հարաբերություններ, բանասիրություն եւ լրագրություն ֆակուլտետների առաջին կուրսեցիների համար է: Մրցույթին մասնակցող երիտասարդները պետք է լինեն սոցիալապես կարիքավոր ընտանիքներից եւ պարտավորվեն ուսման ավարտից հետո առնվազն 5 տարի աշխատել Հայաստանում կամ Արցախում: «Մեր նպատակը տեղում կրթական համակարգին աջակցելն է: Այդ պատճառով ուսանողի հետ կնքվում է պայմանագիր, որի խախտման դեպքում ուսանողը կամ նրա ընտանիքը պետք է փոխհատուցի ուսմանն առնչվող ՀՕՖ-ի կատարած ծախսերը», ասաց Լետն Լաճիկյանը եւ ուրախությամբ ավելացրեց, որ մինչ օրս նման դեպքի չի գրանցվել:

Գրասենյակում զգուշացնում են, որ ուսման ընթացքում ուսանողի առաջադիմության անկման կամ նրա ընտանիքի սոցիալական վիճակի բարելավման դեպքում ֆոնդը դադարեցնում է ուսման վարձի վճարումը: Ի դեպ, 2003/04 ուսարում ցածր առաջադիմություն դրսեւորած երեք ուսանողներ զրկվեցին կրթաթոշակից:

Մրցույթին մասնակցել ցանկացող երիտասարդները մինչեւ օգոստոսի 31-ը պետք է ներկայացնեն դիմում, անձնագիր, միջնակարգ կրթության վկայականի պատճենները, ընդունելության քննությունների քննաթերթիկը, վճարովի ուսուցմամբ ուսանող դառնալու վերաբերյալ համապատասխան տեղեկանք եւ ընտանիքի սոցիալական անձնագիր («Փարոս») պատճենը: ՀՕՖ-ի աշխատակիցները, վստահելով հանդերձ ներկայացված փաստաթղթերին, այցելում են յուրաքանչյուր հայաստոփ բնակարան, զրուցում ընտանիքի անդամների, նույնիսկ հարեւանների հետ: «Մեկ սխալ ընտրությունն էլ կարող է շատ բացասական անդրադառնալ ծրագրի վրա: Եղել են դեպքեր, երբ մեզ փորձել են խաբել, սակայն օգտագործել ենք բոլոր լծակները եւ բացահայտել իրականությունը», ասում է Լաճիկյանը: Նախնական ընտրությունից հետո դիմորդները հրավիրվում են հարցազրույցի եւ ընտրվում 10 լավագույնները:

«Առանց տարկեցման իրավունքի» (ԱՏ) բուհ ընդունված երիտասարդները չեն օգտվում պետական որեւէ ծրագրից: Ինչ վերաբերում է կրթաթոշակին, այս տարի առաջին անգամ ԱՏ-ով ընդունված երկու երիտասարդ է դիմել կրթաթոշակ ստանալու ծրագրին: ՀՕՖ-ի կրթական ծրագրերի համակարգող **Ռիտա Խաչիկյանն** ասաց, որ դեռեւս կրթավճարը տրամադրող նյութական բարերար Անուշ Մաթետսյանի հետ չեն խոսել այս մասին: Հնարավոր է, որ ԱՏ-ով ընդունված երիտասարդները նույնպես մրցույթին մասնակցելու հնարավորություն ունենան:

Երեկ ՀՕՖ-ում դիմումների ընդունման առաջին օրն էր: Մինչ աշխատանքային օրվա ավարտն արդեն 15 դիմում էր ներկայացվել: Արդեն 9-րդ տարին իրականացվող ծրագրի շնորհիվ պետական բուհերի ավելի քան 80 երիտասարդներ ստացել են այս կրթաթոշակը եւ հնարավորություն ունեցել ուսումը շարունակելու բուհում:

ԹԱՄԱՐ ՄԵԼՔՈՅԱՆ

Բենոն Սեւանը՝ խաղաղության նոխազ

«Մինչ այժմ ճշմարտության կողմնակից եմ եղել եւ շարունակում եմ լինել»

Հրաժարական

Օգոստոսի 7-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ եւ «Նավթ պարենի դիմաց» ՄԱԿ-ի պատմության մեջ մեծագույն մարդասիրական ծրագրի գործադիր տնօրեն Բենոն Սեւանը խորհրդատուի պաշտոնից իր հրաժարականը ներկայացրեց գլխավոր քարտուղար Կոֆի Անանին ուղղված անձնական նամակով, որտեղ նշված էր.

«Տխրությամբ, բայց նաեւ հպարտությամբ եմ հրաժարական ներկայացնում: Մենք երկար ժամանակ միասին աշխատել ենք կազմակերպության ամենադժվարին եւ ամենակարեւոր հիմնահարցերի լուծման ոլորտներում: Հպարտ եմ, որ համագործակցել եմ գործընկերներիս հետ եւ այն ամենով, որ մենք միասին տարիների ընթացքում ձեռք ենք բերել: Հպարտ եմ նաեւ, որ «Նավթ պարենի դիմաց» ծրագրի շրջանակներում մենք կարողացանք բարելավել Իրաքի ժողովրդի ծանր վիճակը: Մեզ հաջողվեց կերակրել 27 միլիոն իրաքցիների, կրկնապատկել նրանց սննդի օրական կալորիականության չափը եւ սովամահությունից ու հիվանդություններից փրկել հազարավոր անմեղ մարդկանց: Մեր գործունեությունը եղել է թափանցիկ: Անձամբ ես բանավոր եւ գրավոր կանոնավոր զեկուցել եմ Ձեզ եւ Անվտանգության խորհրդին եւ ստացել ձեր բոլորի գովասանական խոսքերը կատարվածի համար, ի հեռուստ բազմաթիվ դժվարությունների: Այստեղից էլ իմ տխրության պատճառը: Ցավում եմ, նկատելով այդ բոլոր մարդկանց լությունը ի դեմս կատարվածի՝ վերջին շրջանում հնչող քննադատությունների:

2003 թվի նոյեմբերի 21-ին ծրագրի ավարտից ի վեր ՄԱԿ-ը մոտ 10 միլիարդ դոլար է փոխանցել Իրաքի զարգացման հիմնադրամին, թափանցիկ հաշվեցուցակների մի ամբողջ փաթեթով: «Նավթ պարենի դիմաց» ծրագրի իսկական «սկանդալը» փաստերի աղավաղման եւ խեղաթյուրման մեջ է:

Հուսախաբ եմ եղել այն հեղհեղուկ պաշտոնական դիրքից, որով ՄԱԿ-ն արձագանքեց ծրագրի «սկանդալային» մեղադրանքներին: Այդ մեղադրանքները անհիմն են, եւ դուք բոլորդ, ովքեր աշխատել եք ինձ հետ, քաջատեղյակ եք, որ դրանք արհեստական են ու շինծու: Անկախ հետաքննական հանձնախումբը (ԱՀՀ) մոտ 35 միլիոն դոլար է ծախսել եւ ցարդ չի կարողացել ապացուցել, որ թեկուզ մեկ ցենտ ավելի է ծախսվել, քան այն, ինչ ես կամավոր ժամանակին ներկայացրել եմ իմ հաշիվներում: Նրանք կառչել են պարզապես կողմնակի տեղեկություններից եւ ամբաստանել ինձ իբր իրաքյան նավթային գործառնություններում մասնավոր կապալառուի հետ գործ ունենալու մեջ: Դուք ինձ լավ եք ճանաչում եւ գիտեք, որ չէի կարող իմ երկարամյա կարիերայի ընթացքում վաստակած բարձր հեղինակությունը վարկաբեկել հանուն 160 հազար դոլարի:

Ես լրիվ հասկանում եմ, թե ինչ ճնշումների տակ եք Դուք եւ թե ինչ միջոցների են դիմում ոմանք խորտակելու ոչ միայն իմ, այլեւ Ձեր հեղինակությունը: Բայց քաղաքական նկատառումներով ինձ զոհաբերելը ոչ հագուրդ է տալու նրանց ցանկություններին, ոչ էլ նպաստելու է Ձեզ կամ Ձեր ղեկավարած կազմակերպությանը»:

Նամակ-հրաժարականի վերջում Բենոն Սեւանը շաս դիպուկ գրում է. «Կազմակերպությանը նպաստելու միակ ձեւը քաղաքական ճնշումները դիմակայելն է եւ ճշմարտությունը բարձրացնելը: Դա ես արել եմ անցած 40 տարիների ընթացքում եւ շարունակելու եմ անել»:

ԱՀՀ-Սեւան համագործակցությունը

Պոլ Վոլկերի գլխավորած Անկախ հետաքննական հանձնախումբն իր ստեղծման օրից որպես խաղաղության նոխազ է ընտրել Բենոն Սեւանին եւ փորձել նրան վարկաբեկելով շեղել մարդկանց ուշադրությունը առավել ծանր քաղաքական խնդիրներից: Ոչ մեկին հաշվետու չլինելով եւ ենթադրություն ենթադրության վրա կուտակելով հանձնախումբը իրարից անկապ, հաճախ հակասական նյութերի վրա հենվելով փորձել է հասնել ճշմարտության, առանց անմիջական տեղեկություններ քաղելու գործին լավատեղյակ Բենոն Սեւանից: Սեւանն ինքը բազմիցս առաջարկել է եւ նույնիսկ գրավոր պատասխանել է հանձնախմբի հարցերին, ինչը պիտի բացառիկ հնարավորություն ընձեռեր հասնելու անաչառ ու տրամաբանական եզրակացությունների: Նա նույնիսկ պատրաստ է եղել տարեկան 1 դոլար խորհրդանշական աշխատավարձով շարունակել աշխատել (թոշակի անցնելուց հետո) որպեսզի աղահովվի համագործակցությունը եւ խնդրի ներկայացման անաչառությունը:

Սեւանի ծառայությունները

Բենոն Սեւանը ՄԱԿ-ի կազմում աշխատել է 40 տարի: Շատ հաճախ նրան են վստահված եղել ամենաբարդ եւ ամենակնճռոտ առաքելությունները: Աֆղանստան, Անգոլա, Բուրունդի, Կոսովո, Ռուանդա, Սոմալի, Հարավային Լիբանան, Իրաք, ահա երկրների ոչ լրիվ ցանկը, որոնցում նա նույնիսկ մահված սպառնալիքի ներքո անձնվիրաբար գործել է: Բաղդադում 2003 թվի օգոստոսի 19-ին մահապարտները ռմբակոծեցին ՄԱԿ-ի գրասենյակը, որտեղ իր գործընկերների հետ նա խորհրդակցում էր: Ընկերներից շատերը զոհ գնացին, իսկ ինքը միայն երջանիկ պատահականությամբ փրկվեց:

ՄԱԿ-ի պատմության մեջ նրա առաքելություններից ամենաբարդն ու ամենապատասխանատուն եղել է «Նավթ պարենի դիմաց» ծրագիրը, որի գործադիր տնօրենն էր նշանակվել Կոֆի Անանի կողմից: Վերջինս 1997-ի հոկտեմբերին սկիզբ առած այդ ծրագիրը որակել է «ամենաանսովոր պարականությունը, որ Անվտանգության խորհուրդը երբեւէ դրել է քարտուղարության ուսերին»: Իսկ ծրագրի ավարտին (2003 թ. նոյեմբեր) նա հայտարարել է, որ պրն Սեւանը «ծառայել է, ինչպես դրանից առաջ նաեւ այլ առաքելությունու, սովորական պարականությունից անցնող նվիրվածությամբ»:

Բենոնն առանց վախի կամ ակնկալիքների դեմ առ դեմ հանդիպել է ինչպես Իրաքի կառավարության, այնպես էլ Անվտանգության խորհրդի անդամների հետ:

Վերջին շրջանում միջազգային լրատվամիջոցները ողողված էին ընդհանրապես ՄԱԿ-ի «Նավթ պարենի դիմաց» ծրագրի եւ մասնավորապես այդ ծրագրի գործադիր տնօրեն Բենոն Սեւանի վերաբերյալ «սկանդալային» բացահայտումներով: Դժբախտաբար մեր լրատվամիջոցներն առանց խորանալու խնդրի էության մեջ եւ երկրորդ կողմի բացատրություններն իմանալու, ընթերցողներին եւ ունկնդիրներին մատուցեցին միջազգային տեղեկություններ առանց անհրաժեշտ մեկնաբանությունների: Նախկին մելգոնյանցի Վահե Գուլումճյանին (Բենոն Վահե Սեւանին) արժանին մատուցելու մտահոգությամբ ստորեւ ներկայացնում ենք մեդալի մյուս կողմը ըստ նրա խորհրդատու իրավաբան Էրիկ Լյուիսից ստացած տեղեկությունների:

Չբացահայտված աղբյուրներ, անհիմն մեղադրանքներ

Անկախ հետաքննական հանձնախումբը, հենվելով չբացահայտված աղբյուրների վկայությունների վրա, եզրակացրել է, որ պրն Սեւանը Իրաքի պաշտոնյաների հետ իր հանդիպումներում «նշել» կամ «ակնարկել» է անունը մի որոշակի ընկերության (հազարավորներից մեկը), որը նավթային եւ հումանիտար օգնության պայմանագիր է կնքել եւ դրանով իսկ օժանդակել, որ Սեւանն օգտվի այդ գործարքից:

Ըստ 1998-2000 թթ. ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ Սաիդ Հասանի, Իրաքն այդ ժամանակաշրջանում մեկուսացված վիճակում էր, ճարահատյալ ջանքեր էր գործադրում դրսի աշխարհի հետ կապեր հաստատելու եւ վեց տարիների ընտեսական սանկցիաների հետեւանքով կորցրած նավթային շուկայի իր բաժինը վերականգնելու համար: Այդ իմաստով ամբողջովին արդարացված էր եւ տրամաբանական որեւէ օտար ընկերության կամ ընկերությունների նշումը կամ ակնարկումը, մանավանդ որ ՄԱԿ-ն իր հերթին խրախուսում էր Իրաքի մատակարարները: Եվ ՄԱԿ-ի այդ ծրագիրն էլ հենց դրան էր նպատակաուղղված:

Բայց ԱԱՀ-ն գտնում է, որ եթե Սեւանը «նշել» է մի անուն, ուրեմն նա այդ ընկերությունից որոշակի շահ է ակնկալել: «Ալ շարք էլ Առաաբ» հանդեսի 2005 թ. փետրվարի 28-ի տվյալներով՝ Իրաքի նախկին նավթարդյունաբերության նախարար Ամեր Ռաշիդի շահերը պաշտպանող իրավաբանը, որի ենթադրյալ վկայությունների վրա իբր հենվել է ԱՀՀ-ն, ասել է, որ ԱՀՀ-ի հարցաքննած Իրաքի նախկին պաշտոնյաները եղել են «ամերիկացի նվաճողների ճնշումների տակ, քանի որ Մ. Նահանգները Իրաքի հարցում հակադրվում էր միջազգային այդ կազմակերպությանը»:

ԱՀՀ-ի մեկ ուրիշ անհիմն պնդման համաձայն, պրն Սեւանի հայտարարություններն իր եկամուտների մասին իբր չեն համապատասխանում հանձնախմբի քաղած տեղեկություններին: ԱՀՀ-ն հավատացած է, որ Սեւանի կիպրոսաբնակ 80-ամյա հանգուցյալ մորաքույրը, որը նրան մեծացրել, ամբողջ կյանքում աշխատել եւ ապրել է առանց վարձ վճարելու 1960-ականներին նրա համար Սեւանի գնած տան մեջ, բավականաչափ գումար չի ունեցել, որ Սեւանին նվիրաբերի այն 160 հազար դոլարը, որ պրն Սեւանն ինքը կամավոր հայտարարել էր ՄԱԿ-ի իր ֆինանսական զեկույցներում՝ ԱՀՀ-ի ստեղծումից տարիներ առաջ: ԱՀՀ-ի այսպես կոչված «գլխավոր վկան», որի տեղեկություններով են իբր առաջնորդվել, 40 տարի Կիպրոսում չի ապրել, նշված մորաքրոջ հետ ընդամենը մի քանի անգամ է հանդիպել, բայց նրա հետ ֆինանսական հարցեր չի քննարկել եւ գաղափար չի ունեցել նրա եկամուտների մասին: Այդ «վկան» ինքը հերքել է, որ նման «բացահայտումներ» է արել ԱՀՀ-ին: «Մյուս երկու «վկաները»՝ բանկի աշխատակիցները, պնդում են, որ «ոչինչ չգիտեն Սեւանի մորաքրոջ ֆինանսական կարողությունների մասին»: Նման «ապացույցներով» ԱՀՀ-ն փաստորեն վարկաբեկում է իրեն եւ իր կազմում գտնվող անդամների հեղինակությանը:

Երրորդ մեղադրական պնդման համաձայն, Սեւանն իբր կաշառք է ստացել «Աֆրիկ Միդլ Իսթ փեթրոլիումից» (ԱՄԻՖ) փոխադարձ համագործակցության գալով Ֆրեդ Նադլերի եւ ԱՄԻՖ-ի նախագահ Աբդելնուրի հետ: Սա եւս բացահայտ սուտ է: Նախ հանձնախումբը ոչ մի ապացույց չի ներկայացրել հիմնավորելու իր պնդումը: Երկրորդ՝ պարոնայք Սեւանն ու Աբդելնուրը հերքել են ասեկոսեն: Երրորդ՝ ԱՀՀ-ն երբեք չի հարցաքննել Նադլերին: Փոխարենը ԱՀՀ-ն հենվելով այն «փաստի» վրա, որ վեց տարիների ընթացքում պրն Նադլերը յոթ որոշակի օրերի հեռախոսով կապվել է եւ Սեւանի, եւ Աբդելնուրի հետ, եզրակացրել է, որ ինչ-որ «դավադրական գործարք» պետք է լինի այնտեղ: Այդ հեռախոսային խոսակցությունների արձանագրությունները լսելու պրն Սեւանի բազմաթիվ խնդրանքները մնացել են անպատասխան:

Անպարկեշտություն

Պրոֆեսիոնալ ոչ մի մեղադրող կողմ երբեք դատական գործ չի հարուցի նման անկապ եւ հակասական «փաստերի» պատառիկների վրա հենվելով: Բայց ԱՀՀ-ն ոչ մեկին հաշվետու չէ եւ կարող է ենթադրությունների կույտերով հասնել «ճշմարտության»: Պարզվել է, օրինակ, որ ԱՀՀ-ն հարցաքննած է արել «Նյու Յորք թայմսի» նախկին լրագրող Յուսուֆ Իբրահիմին նախան զեկույցը ներկայացնելը եւ տեղեկացել, որ նա ներկա է եղել 1999-ի մարտին Սեւան-Աբդելնուր հանդիպմանը եւ որ նրա տպավորությամբ երկու անձնավորությունները առաջին անգամ էին հանդիպում: ԱՀՀ-ն այս կարեւոր տեղեկությունը չի ընդգրկել իր զեկույցում:

Գործի իսկական սկանդալները

Շատ է խոսվում ու գրվում «Նավթ պարենի դիմաց» «սկանդալի» մասին, այդպես էլ չբացահայտելով, թե ինչ սկանդալի մասին է խոսքը:

Պարոն Սեւանի կարծիքով՝ մի քանի սկանդալ կարելի է նշել այս գործում:

Առաջինը: Չգիտակցել կամ չցանկանալ գիտակցել, որ «Նավթ պարենի դիմաց» ծրագիրը ՄԱԿ-ի պատմության մեջ ամենամարդասիրական եւ ամենահաջողված ծրագիրն է եղել, որին հատկացված ֆինանսական միջոցների չարաշահումների կամ վատնումների վերաբերյալ ոչ մեկը հիմնավոր փաստեր ցարդ չի ներկայացրել: Չի ներկայացվել նաեւ որեւէ փաստ, որ այդ գործին առնչվող անդամներից որեւէ մեկն օգտվել է որեւէ արտոնությունից կամ թերացել է իր պարականություններում: Ընդհակառակը՝ հնչել են գովասանական խոսքեր կատարվածի մասին (տե՛ս պրոֆ. Ջոյ Գորդոնի վկայությունը կառավարական բարեփոխումների հանձնաժողովի առաջ 2005 թ. ապրիլի 12-ին): Սկանդալն այս բոլորը աղավաղված կամ գլխիվայր ձեւով ներկայացնելու մեջ է:

Երկրորդ: Սկանդալը ծրագրի գործադրման ընթացքում Սադդամին տրված լիազորությունների եւ հարստանալու հնարավորությունների մեջ է: Ծրագիրը վաստաբանողները մեղադրում են ծրագիրը իրականացնողներին նշելով, որ անօրինական գումարների հոսք է եղել դեպի Սադդամ Հուսեյնը: Իրականում պատասխանատվությունը ծրագիրը կազմակերպողների վրա է ընկնում, որոնք հաշվի չէին առել նավթի գների տատանումներն Իրաքում եւ քաղաքական նկատառումներով նավթի մատանենգությունը՝ ծրագրից դուրս: Անվտանգության խորհրդի անդամները ծրագիրը կազմելիս համաձայնել էին նավթի վաճառքի եւ պարենի գնման կապալառուների ընտրության իրավունքը թողնել Սադդամին: Զարմանալի չպետք է լինի ուրեմն, որ Սադդամն ընտրելու էր այնպիսիներին, որոնք կհամապատասխանեին իր քաղաքական շահերին: Այդ եւ գների տատանումների մասին բավական միայն զգուշացվել է Անվտանգության խորհուրդը, որի անդամները գործնականում չեն արձագանքել այդ ահազանգերին: Սեւանը զեկուցագրեր է ուղարկել նաեւ դեպի Հորդանան, Թուրքիա եւ Սիրիա նավթի անօրինական հոսքի մասին: Դարձյալ ոչ մի արձագանք:

Երրորդ եւ գուցե ամենամեծ սկանդալն այս գործում ԱՀՀ-ի գործերի վարման ձեւի մեջ է, որը զուրկ է անաչառությունից, թափանցիկությունից եւ կողմերին հավասար հնարավորությունների ընձեռումից:

Սեւանի համագործակցության ոգուն նրանք դեմ են տվել ամեն գնով «խաղաղության նոխազ» գտնելու քաղաքականությունը, որպեսզի «խնայեն» որոշ մարդկանց հեղինակությունը: Փոխանակ անմիջական կապի մեջ մտնելու Սեւանի հետ եւ լսելու նրա բացատրությունները եւ պատասխանները, նրանք թաքուն «վկայություններ» են հավաքել, անգամ մոտիկ չթողնելով նրան իր իսկ գտած արձանագրություններին: Նրանից պահանջել են, որ վեց տարվա վաղեմություն եւ մեկ որոշ տեւողություն ունեցող հեռախոսազանգերի չնչին մանրամասներ հիշի, առանց հիմնավորելու իրենց նպատակները: Սա ավելի քան «թափթփված» մոտեցում է, որը միայն կանխորոշված մտադրություն կարող է թաքցնել: Նույնիսկ այս տարվա հունվարի 21-ին առաջին անգամ Սեւանին հարցաքննելուց առաջ ԱՀՀ-ի ղեկավար Պոլ Վոլկերը հունվարի 7-ին «Նյու Յորք թայմս»-ին տված իր հարցազրույցում նշել է, որ հանձնախումբն արդեն որոշակի եզրակացություններ հանգել է Սեւանի դեմ մեղադրանքներ առաջադրելու հարցում: Սա հետաքննական եւ դատավարական գործընթացների կոպիտ խախտում է: Խախտում է նաեւ ԱՀՀ-ի կողմից «գաղտնի» փաստարկների օգտագործումը որպես վկայություն: Եվ վերջապես խախտում է, որ հետաքննողները չեն դիմել անձամբ Բենոն Սեւանին, որն այդ ծրագիրը հմտորեն վարել է ամբողջ վեց տարի (1997 թ. հոկտեմբերից մինչեւ 2003 թվի նոյեմբերը), սանալու համար չմիջնորդավորված, անմիջականորեն սկզբնաղբյուրից տրամադրված տեղեկություններ: Եվ արդյոք այս խախտումների հետեւանքով չէ՞, որ որպես բողոքի նշան այս տարվա գարնանը այդ հանձնախմբից հեռացել են Ռոբերտ Պարտոնն ու Միրանդա Դունկանը:

Վերջաբանի փոխարեն

Նման հանձնախմբերի եւ աշխատանքի առկայության պայմաններում բացառված չէ, որ այլ զոհեր եւս հայտնվեն: Ով կլինի հաջորդը:

Պատրաստեց
ՀԱԿՈԲ ՇՈՒԼԻԿՅԱՆԸ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող Նոյեմբերյանի անասնամթերման գրասենյակի գույքի մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2005թ.-ի հունիսի 25-ի թիվ 956-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցել ***Նոյեմբերյանի անասնամթեման գրասենյակի գույքի*** մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	Տավուշի մարզ, գ. Բերդավան
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N956-Ն, 29.06.05թ.
1.3	Ընկերության բենֆերի մակերեսը (մ/մ), որից	697
1.4.	Զբաղեցրած հողային տարածը (հա)	2
	Տեղեկություններ անշարժ գույքի չափագրման արդյունքների հիմքերի մասին	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 30.12.04թ. NUմ-3/4510 գրություն
1.5.	Գնահատված արժեքը (հազ.դրամ)	3598

2. Տեղեկություններ մասնավորեցվող գույքի վերաբերյալ

(հզ. դրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում	34.4	3598.1
	բենֆեր /2հաս/	28,0	3294.1
	կառուցվածքներ եւ փոխանցվող հարմարանքներ /1հաս/	3,0	80.3
	տրանսպորտային միջոցներ /1հաս/	3,0	213
	արտ. սնս. գույք, գործիք եւ այլն /1հաս/	0.4	10.7

* Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 եւ 5.2 կետերը/ եւ 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Ամուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունից /այսուհետեւ՝ Ամուրդի կենտրոն/)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված տվյալ ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Ամուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժին՝ մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոխր չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆախիմիլային կարգով: Ստացված փաստաթղթերը Ամուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները Ամուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնի կողմից կնքվում եւ մուտագրվում են:

5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

Դիմողները մինչեւ 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները քննարկման ենթակա չեն:

Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող գույքի համար առաջարկվող գինը, /նվազագույն գինը՝ 900հզդրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

Վճարումներ եւ պայմանագրի կնքում

Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

Մրցույթի հաղթողը գույքի արժեքը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից եռամսյա ժամկետում ՀՀ-ան արժույթով գույքի վաճառքի գնի 70 տոկոսն ուղղելով ՀՀ պետական բյուջե, իսկ 30 տոկոսը՝ համապատասխան համայնքի ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի:

Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ եւ մրցույթում չհաղթելու կամ մինչեւ 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

Մրցույթի հաղթողը առաջարկված գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

Համաձայն ՀՀ կառավարության 29.06.05թ. թիվ 956-Ն որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գնորդը պարտավորվում է՝ իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 32400 դրամ, ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու եւ պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը համարվում է չկայացած:

Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	179 900 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	18 ը հոկտեմբերի 2005թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր. Քոչարի 27 «Ամուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության վարչատնտեսական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	18 ը հոկտեմբերի 2005թ. , ժամը՝15:00 ք.Երեւան, Հանրապետության Հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆախիմիլային կարգ	*27-65-94*
5.7	Ինտերնետ	*URL: //www.privatization.am*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Ամուրդի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչություն

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
մրցույթով մասնավորեցվող Սեւանի անասնամթերման գրասենյակի գույքի մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2005թ.-ի հունիսի 16-ի թիվ 864-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցել **Սեւանի անասնամթերման գրասենյակի գույքի** մասնավորեցման մրցույթին:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	ք. Սեւան, Կոլխոզնիկների փող.
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N864-Ն, 16.06.05թ.
1.3	Ընկերության բենֆերի մակերեսը (մ/մ)	345
1.4.	Զբաղեցրած հողային տարածը (հա)	0.58
	Տեղեկություններ հողահատկացման հիմքերի մասին	Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի N ԱԴ -3/4510, 30.12.2004թ գրություն
1.5.	Գնահատված արժեքը (հազ.դրամ)	2019

2. Տեղեկություններ մասնավորեցվող գույքի վերաբերյալ

(հզ. դրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում	28.5	2018.8
	բենֆեր /2հաս/	16.7	1515.4
	կառուցվածքներ եւ փոխանցող հարմարանքներ /4հաս/	2.6	26.4
	տրանսպորտային միջոցներ /3հաս/	9.2	477

* Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 եւ 5.2 կետերը/ եւ 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Ամուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունից /այսուհետեւ՝ Ամուրդի կենտրոն/)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված տվյալ ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Ամուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժին՝ մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոխր չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆախիմիլային կարգով: Ստացված փաստաթղթերը Ամուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները Ամուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնի կողմից կնքվում եւ մուտագրվում են:

5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

Դիմողները մինչեւ 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները քննարկման ենթակա չեն:

Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող գույքի համար առաջարկվող գինը, /նվազագույն գինը՝ 2019հզդրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

Վճարումներ եւ պայմանագրի կնքում

Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

Մրցույթի հաղթողը գույքի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից եռամսյա ժամկետում՝ ՀՀ արժույթով՝ բաժնետոմսերի վաճառքի գնի 70 տոկոսն ուղղելով ՀՀ պետական բյուջե, իսկ 30 տոկոսն՝ համապատասխան համայնքի ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի:

Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ եւ մրցույթում չհաղթելու կամ մինչեւ 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

Մրցույթի հաղթողը արձանագրության օրինակը ստանալու օրվանից հաշված 60 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

Համաձայն ՀՀ կառավարության 16.06.05թ. թիվ 864-Ն որոշման, մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գնորդը պարտավորվում է՝ իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 70193դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու եւ պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը համարվում է չկայացած:

Վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	100 950 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	11-ը հոկտեմբերի 2005թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Հր. Քոչարի 27 «Ամուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության վարչատնտեսական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	11-ը հոկտեմբերի 2005թ. , ժամը՝15:00 ք.Երեւան, Հանրապետության Հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆախիմիլային կարգ	*27-65-94*
5.7	Ինտերնետ	*URL: //www.privatization.am*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Ամուրդի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչություն

Մասնավորեցում

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

մրցույթով մասնավորեցվող «Շիրակին» ՓԲԸ-ի մասին

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2005թ.-ի մարտի 31-ի թիվ 622-Ն որոշմամբ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու **«Շիրակին» ՓԲԸ-ի բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին:**

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Մասնավորեցվող օբյեկտի հասցեն	Լ.Գյումրի, Թամանյան 26
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N622-Ն, 31.03.05թ.
1.3.	Ընկերության շենքերի մակերեսը (Մ2)	29784.4
1.4.	Զբաղեցրած հողային տարածը (հա)	8.72
	Տեղեկություններ հողհատկացման հիմքերի մասին	Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի
		գրանցման վկայական
		N0313417, 519134
1.5.	Գործունեության հիմնական տեսակը	շինարարական աշխատանքներ
1.6.	Աշխատողների թվաքանակը (2004թ.-ի մարտի 1-ի դրությամբ)	12
1.7.	Բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ.դրամ)	195772
1.8.	Մասնավորեցման ենթակա բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ.դրամ)	156618

Ընկերության կառուցվածքային միավորները

ՀՀ	Անվանումը	Հասցեն	Շենքերի մակերեսը /հա.մ/	Հողային տարածը /հա/
1	«Շիրակին» ՓԲԸ	Լ. Գյումրի Թամանյան 26	2254	0.2
2	«Շիրակին» ՓԲԸ բնակեցված պահեստ	Լ. Գյումրի , Խանջյան 6ա	576	0.06
3	«Շիրակին» ՓԲԸ փայտյա տնակներ	Լ. Գյումրի, Շ. Տալյան 2	745	0.07
4	«Շիրակին» ՓԲԸ առողջարան	Լ. Գյումրի, Շահումյան196	2226	0.22
5	«Շիրակին» ՓԲԸ վարչական շենք	Լ. Գյումրի, Խանջյան 6	665.8	0.07
6	«Շիրակին» ՓԲԸ վարչական շենք	Լ. Գյումրի, Ղուկասյան 30	930.2	0.1
7	«Շիրակին» ՓԲԸ պահեստներ	Լ. Գյումրի, Աղայան 75	2822.64	0.3
8	«Շիրակին» ՓԲԸ բնակեցված վարչական շենք	Լ. Գյումրի, Մնջոյան 1ա	780.5	0.8
9	«Շիրակին» ՓԲԸ վարչական շենք	Լ. Գյումրի, Սավոյան 5	1164	0.5
10	«Շիրակին» ՓԲԸ բնակեցված անգար	Լ. Գյումրի, Ռեմինի եւ Կիրովաբադյան խաչմերուկ	150	0.1
11	«Շիրակին» ՓԲԸ բնակելի փայտյա տնակներ	Լ. Գյումրի, Չայկովսկու փող.	8496	0.8
12	«Շիրակին» ՓԲԸ Ավտոտրանսպ. տեղամաս	Լ. Գյումրի, Գործարանային 6	1770.1	0.2
13	«Շիրակին» ՓԲԸ ԵԲԿ արտադրամաս	Լ. Գյումրի, Շ. Տալյան 2	6377.41	0.6
14	«Շիրակին» ՓԲԸ Ախուրյանի տեղամաս	Շիրակի մարզ, գ. Ախուրյան	826.4	4.7
15	«Շիրակին» ՓԲԸ բարձր լարման ՏՊ	Շիրակի մարզ, Ք. Գյումրի	-	-

2.Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.04.2004թ դրությամբ)

(հզ. դրամ)

ՀՀ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	41128.4	225271.4
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	**41128.4	225271.4
	շենքեր /47հաս/	13140.9	165202.96
	կառուցվածքներ եւ փոխանցող հարմարանքներ /15հաս/	9025.7	32881.6
	մեքենաներ եւ սարքավորումներ /35հաս/	5679.8	11243.7
	տրանսպորտային միջոցներ /24հաս/	12948.6	15332.4
	արտադրական տնտ. գույք, գործիք եւ այլն /11հաս/	333.4	610.8
2.1.2.	Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	42	42
2.2.	Ընթացիկ ակտիվներ	59417	59417
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	30023	30023
2.4.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝***	58935	58935
	սոցիալական ապահովագրության գծով	4592	4592
	ՀՀ պետական բյուջեի նկատմամբ	38243	38243
	անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով	673	673
	այլ ընթացիկ պարտավորությունների գծով	7697	7697
	առեւտրային կրեդիտորական պարտքերի գծով	7730	7730

** Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

***Համաձայն ՀՀ կառավարության N622-Ն, 31.03.05թ. որոշման, նշված պարտավորություններից բացի, մասնավորեցումից հետո այլ պարտավորություններ ի հայտ գալու դեպքում վաճառողը պատասխանատվություն չի կրում:

2.5.Համաձայն ՀՀ կառավարության N622-Ն, 31.03.05թ. որոշման, Ընկերությունը 1999-2003 թվականների տնտեսական գործունեության արդյունքներով վճարման ենթակա շահութաբաժինների գծով պարտավորություններ չունի:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 եւ 5.2 կետերը/ եւ 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունից /այսուհետեւ՝ Աճուրդի կենտրոն/)

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված տվյալ ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր

Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է Աճուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժին՝ մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12 կետը):

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով:

Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆախսիմիլային կապով: Ստացված փաստաթղթերը Աճուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները Աճուրդի կենտրոնի վարչատնտեսական բաժնի կողմից կնքվում եւ մուտքագրվում են:

5.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

Դիմողները մինչեւ 5.5 կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները ընդունման ենթակա չեն:

Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը,

/նվազագույն գինը՝ 39155հազ.դրամ/

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով /ներկայացվում է երեք տարվա կտրվածքով/

սոցիալական եռաբխիներ, այդ թվում աշխատատեղերի (ներկայացվում է մարդ/ամսով) եւ միջին աշխատավարձի վերաբերյալ:

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

Մրցույթի կայացման դեպքում ընկերությունը պետք է վերակազմակերպվի «Շիրակին» բաց բաժնետիրական ընկերության:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

Մրցույթի հաղթողը բաժնետոմսերի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից հաշված մեկ ամսվա ընթացքում:

Վճարումները կատարել եռամսյա ժամկետում՝ ՀՀ արժույթով՝ բաժնետոմսերի վաճառքի գնի 70 տոկոսն ուղղելով ՀՀ պետական բյուջե, իսկ 30 տոկոսն՝ համապատասխան համայնքի բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի:

Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ եւ մրցույթում չհաղթելու կամ մինչեւ 5.5 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում

Մրցույթի հաղթողը վճարումները կատարելուց հետո 30 օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր:

Համաձայն ՀՀ կառավարության 31.03.05թ. N 622-Ն որոշման,

մասնավորեցման պայմանագրում պետք է նախատեսվի, որ գույքային իրավունքների պետական գրանցման եւ գույքի արժեքի որոշման հետ կապված վճարները ու տուրքերը կատարվում են գնորդի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարի չափի տոկոսը հաշվարկվելու է վաճառքի վերջնական գնից:

Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու եւ պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը համարվում է չկայացած:

Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	9 788 600 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտքագրման հաշուկ հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	18-ը հոկտեմբերի 2005թ. , ժամը՝14:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	Լ.Երեւան, Հր.Քոչարի 27, «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության վարչատնտեսական բաժին
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	18-ը հոկտեմբերի 2005թ. , ժամը՝15:00 Լ.Երեւան, Հանրապետության Հրապարակ, ՀՀ Կառավարական 2-րդ շենք, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆախսիմիլային կապ	*(3741) 27-65-94*
5.7	Ինտերնետ	*URL: //www.privatization.am*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել Աճուրդի կենտրոն՝ 27-65-94 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը վարձակալությամբ տրամադրում է տարածք՝

Հասցե	Ազատ տարածք (Մ)
Գեղարքունիքի մարզ, Մարտունու տարածաշրջանի Ներքին Գետաշեն գյուղում գտնվող պահեստներ	շենք-շինություններ 1306.6

Անհրաժեշտության դեպքում զանգահարել 52-24-72 հեռախոսահամարով, կամ դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման եւ գնահատման գործակալություն» ՊՈԱԿ, Երեւան, Զաքիյան 10 հասցեով:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2005թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում

ՀՀ	Կոդը	Նախարարութ.	Օբյեկտի անվանումը	Հասցեն	Կառավ. որոշում /համարը, ամսաթիվը/	Մրցույթի օրը	Առաջարկված գինը /հազ.դր./	Ներդրումներ	Սոցիալական եռաբխիներ /այդ թվում աշխատատեղերի եւ աշխատավարձի չափը/	Մրցույթի արդյունքը
1	62136	Բնապահպ.	«Էկոսերվիս» ՊՓԲԸ-ի «Ցրիոս» ԴՓԲԸ	Լ.Երեւան, Գաջեզարների 75	657-Ն 02.12.04	19.08.05	-	-	-	Չի կայացել
2	62129	Պետ.գույքի կառ.	«Գուգարքի ԳԵՈ» ՊՓԲԸ	Լոռու մարզ, գ. Մարգա-հովիտ	657-Ն 02.12.04	23.08.05	-	-	-	Չի կայացել
3	20040	Բնապահպ.	«Կոլչեդան» ՊՓԲԸ-ի գույքի կազմից առանձնացված Կապանի բազայի գույք	Լ.Կապան, Բարիկավան թ.	657-Ն 02.12.04	09.08.05	3050	Iտարում - 1,5մլն. դրամ, IIտարում - 2մլն.դրամ, IIIտարում - 1,5մլն.դրամ	-	Կայացել է
4	20812	Քաղ.շին	«Շիրակին» ՓԲԸ-ի գույքի կազմից առանձնացված փայտյա հյուտանոցի եւ ճաբարանի գույք	Լ.Գյումրի, Թեսչերի փ.	622-Ն 31.03.05	12.08.05	780	Iտարում - 1մլն. դրամ, IIտարում -1մլն.դրամ, IIIտարում - 1մլն.դրամ,	-	Կայացել է

ՀՀ	Կոդը	Նախարարությունը	Անավարտ շինարարության օբյեկտի անվանումը	Հասցեն	Կառավ. որոշում /համարը, ամսաթիվը/	Մրցույթի օրը	Առաջարկվ. գինը /հազ. դրամ/	Ներդրումներ	Շինարարությունը սկսելու եւ ավարտելու ժամկետները	Մրցույթի արդյունքը
1	ԱՇ	Առեւտրի եւ տնտ. զարգ.	Երեւանի Ֆուչիկի 27 հասցեում գտնվող «Գառնի» գործարանի ընդլայնում» ԱՇՕ	Լ.Երեւան, Ֆուչիկի 27	683-Ա 31.03.05	09.08.05	5750	Iտարում - 55մլն.դրամ, IIտարում - 100մլն.դրամ Ընդամենը՝ 155մլն.դրամ	Մասնավորեցման օրվանից հաշված 2 տարվա ընթացքում:	Կայացել է

Կազանում հանդիպում են Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները

Իսկ պետքարտուղար Ռայսը նրանց հուշում է հակամարտությունը ԱՄՆ-ի նախաձեռնությամբ կարգավորելու կարեւորությունը

Օգոստոսի 26-ին Թաթարստանի մայրաքաղաք Կազանում տեղի ունեցավ ԱՊՀ ղեկավարների խորհրդի նիստը, որը թեեւ տեւել է ոչ թե մեկ ժամ, ինչպես նախօրոք ծրագրված էր, այլ՝ 3,5, սակայն նախատեսված ասուլիսը չի կայացել: Դրա փոխարեն ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը հակիրճ հայտարարություն է արել, կարծես ընդգծելու, որ խորհրդային 12 հանրապետությունների մասնակցությամբ ստեղծված այս կառույցն ապագա չունի:

Ի դեմ, խորհրդի նիստին Թուրքմենստանի նախագահ Սափարմուրադ Նիյազովը չէր մասնակցել, իսկ մասնակիցներն օգոստոսի 27-ին ներկա են եղել Ռուսաստանի նախագահի մրցանակի համար անցկացվող ձիարշավի մրցումներին: Եթե ամփոփենք ԱՊՀ ղեկավարների խորհրդի նիստը, ապա, անկախ ռուսական զանգվածային լրատվամիջոցների եզրակացություններից, թե այս կառույցը կազմալուծվում է, ձիարշավը պետք է համարել նիստի թերեւ ամենաբուռափելի արդյունքը:

Սա նշանակում է, որ նախագահ Վլադիմիր Պուտինը Ռուսաստանի համար կատարում է այն դերը, ինչ ԽՍՀՄ-ի համար կատարել էր կոմկուսի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը: Այսինքն, եթե Գորբաչովը խորհրդային Միությունն էր քանդել, ապա Պուտինն էլ քանդում է Ռուսաստանի Դաշնությունը: Քանի որ դրա անհրաժեշտ նախապայմանը ռուսական գերազդեցության տարածքների կրճատումն է, ուստի նա կրճատման հաշվարկով ձեռնամուխ է լինում ԱՊՀ-ի կազմալուծմանը:

Թերեւս կազմալուծման առումով պատահական չէր ՌԴ նախագահ Պուտինի այս տարվա մարտի 25-ին Երեւանում արած հայտարարությունը. «ԱՊՀ-ն ընդամենն ակումբ է, ստեղծվել էր քաղաքակիրթ ամուսնալուծության համար»: Ինչ վերաբերում է Ռուսաստանի քանդմանը, այդ առումով էլ չպետք է պատահական համարվեն Պուտինին երկրում երրորդ ժամկետով պաշտոնավարման լիազորություններ տալու ռուսական կոչվող հրեա օլիգարխների նկրտումները:

Նկրտումները մի կողմ, ակնհայտ է, որ ԱՊՀ-ի «քաղաքակիրթ ամուսնալուծության» մասին ազդարարող խորհրդի նիստի շրջանակներում անցկացված որեւէ հանդիպում ոչ մի արժեք չէր կարող ունենալ: Խոսքն օգոստոսի 27-ին Կազանում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի մասին է: Դրան նույն օրը հայկական հեռուստաընկերությունների հետ անդրադարձավ նաեւ թուրքական հանրային հեռուստատեսությունը եւ ընդամենը նշեց. «Քոչարյանի մամուլի խոսնակ Վիկտոր Սողոմոնյանն ասաց, որ Կազանում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը քննարկվել է նաեւ ղարաբաղյան հիմնահարցը, հանդիպումը դրական բնույթ է կրել»:

Քոչարյան-Ալիեւ հանդիպման մասին այլ ինֆորմացիա, քան Սողոմոնյանի վերոհիշյալ գնահատականն է, մենք չունենք: Դա ամենեւին պայմանավորված չէ հանդիպման դռնփակ բնույթով, ոչ էլ ամենայն հավանականությամբ բխում է քննարկումների մասին մամուլին չտեղեկացնելու առնչությամբ հանդիպող կողմերի ձեռք բերած պայմանավորվածությունից:

Այդ դեպքում ինչո՞ւ բացատրել ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի օգոստոսի 25-ի հեռախոսազրույցն ինչպես Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի, այնպես էլ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ, առավել եւս հանդիպման նախօրյակին դրա կարեւորության ընդգծումը: Հարցի հողարկված պատասխանը տալիս է ԱՄՆ պետքարտուղարությունը, տարածելով Ռայսի հեռախոսազրույցների մասին հետեւյալ հաղորդագրությունը. «Նա հեռախոսազրույցներ է ունեցել, որպեսզի ընդգծի այն կարեւորությունը, ինչ ԱՄՆ-ը տալիս է նրանց Կազանում կայանալիք հանդիպմանը եւ հույս հայտնի, որ երկու երկրների նախագահները կգնան փոխզիջումների, որոնք անհրաժեշտ են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար»:

Ակնհայտ է, որ ԱՊՀ ղեկավարների խորհրդի նիստի շրջանակներում անցկացվող հանդիպմանը, երբ նիստը փաստորեն ազդարարում է տվյալ կառույցի մոտալուտ կազմալուծման մասին, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները չէին կարող լրջորեն քննարկել ղարաբաղյան հիմնահարցը, առավել եւս փոխզիջումներ կատարելու հարցում համաձայնության գալ, էլ չենք խոսում կարգավորման մասին: Սա մեկ, երկրորդ, որքան էլ Վլադիմիր Պուտինը ձեռնամուխ լինի ռուսական գերազդեցության տարածքների կրճատմանը եւ որպես արդյունավետ միջոց նախաձեռնի ԱՊՀ-ի կազմալուծումը, այնուամենայնիվ, ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ Ռուսաստանի Դաշնությանը մաս կազմող Թաթարստանի մայրաքաղաքում ընդունված որեւէ որոշում կնպաստեր, որ նախաձեռնությունը Լեռնային Ղարաբաղում անցնի ռուսական կողմին:

Դրանով Անդրկովկասում հանուն ազդեցության ծավալվող ռուս-ամերիկյան մրցապայքարի նախաձեռնությունը եւս կանցներ Ռուսաստանին: Այսպիսով, զգալի կբարդանար վերջինին տարածքներից վտարելու ամերիկյան առաջադրանքի կատարումը:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսը Կազանում կայանալիք հանդիպման կարեւորության մասին Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին արտահայտվելիս իրականում ընդգծել է ղարաբաղյան հակամարտությունն ամերիկյան նախաձեռնությամբ կարգավորելու կարեւորությունը, նախազգուշացրել Ռուսաստանին, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման վայրը չի կարող ազդել կարգավորման ԱՄՆ-ի շահագրգռությունների վրա: Նա միաժամանակ համապատասխան ազդանշան է հաղորդել այն պետություններին, որոնք Անդրկովկաս ներթափանցելու համար ղարաբաղյան հակամարտությանը միջամտելու կամ Լեռնային Ղարաբաղում նախաձեռնություն ցուցաբերելու փորձեր են կատարում:

ՀԱԿՈԲ ՉԱԼԲՅԱՆ

Կազանում «առաջընթաց կամ բեկում» չի արձանագրվել

1-ին էջից

Կազանից Երեւան օդանավում Հայաստանի նախագահից լրագրողները փորձեցին ճշտել՝ ինչ արդյունքներ են տվել Իլհամ Ալիեւի հետ բանակցությունները: Նախագահ Քոչարյանն ընդհանուր առմամբ դրական գնահատեց հանդիպումը, ասաց, որ եթե այս հունով շարունակեն բանակցությունները, վերջը լավ կլինի: Լավատեսական էր նաեւ արտգործնախարարի մեկնաբանությունը: Օսկանյանն ասաց, որ դրական միտումները պահպանվում են, ու թեեւ որոշված չեն պրահյան գործընթացում արտգործնախարարների հաջորդ հանդիպման օրն ու վայրը, համանախագահները հավանաբար կփորձեն երկուսը տաք-տաք ծեծել:

Նախագահներ Քոչարյանի եւ Ալիեւի կազանյան հանդիպման որոշ հատվածների մասնակցել են երկու երկրների արտգործնախարարները եւ Մինսկի խմբի միջնորդների արտգործնախարարները եւ Մինսկի խմբի միջնորդներ Յուրի Մերզլյակովը, Սթիվեն Մանը եւ Բեռնար Ֆասիեն: Ակնկալվում էր նաեւ Ռուսաստանի նախագահի մասնակցությունը, ինչը, սակայն, տեղի չունեցավ: Սա կարող է նշանակել, որ ղարաբաղյան բանակցություններում ռուսական կողմը լուրջ առաջընթացի ակնկալիք չի ունեցել կամ էլ Վլադիմիր Պուտինը զբաղված է ԱՊՀ-ի գործերով:

Թուրքմենբաշին ցույց տվեց «քաղաքակիրթ ամուսնալուծության» օրինակը

Օգոստոսի 26-ին Կազանում տեղի ունեցած ԱՊՀ գագաթաժողովում համագործակցության անդամ երկրների թիվը պակասեց մեկով. Թուրքմենստանն այստեղ ԱՊՀ-ի հետ համագործակցելու է ասոցացված անդամի կարգավիճակով: «Թուրքմենստանը երկկողմանի հիմքի վրա այստեղ եւ փոխադարձ հետաքրքրության հարցերի շուրջը զարգացնելու է իր հարաբերությունները ԱՊՀ երկրների հետ: Մենք կարող ենք նաեւ մասնակցել ԱՊՀ շրջանակներում բազմակողմանի կապերի, բացառությամբ զինվորական եւ ուժային կառույցների», ասվում է Սափարմուրադ Նիյազովի՝ ԱՊՀ երկրների ղեկավարներին հղած ուղերձում:

Փաստորեն Թուրքմենբաշու այս քայլը կարող է լինել «դանդաղ գործողության ական ԱՊՀ-ի տակ»: Նրան կարող են հետեւել համագործակցության այլ անդամ երկրներ, սակայն հիմնականում ռուսական էներգակիրներից կախվածությունը շատ երկրների ոտքերի թոկլ չի տալիս նման քայլ: Օգոստոսի 27-ին Կազանում, ըստ լրատվամիջոցների, նախագահ Միխայիլ Սաակաշվիլին հայտարարել էր, որ իր երկիրը չի պատրաստվում լքել ԱՊՀ-ն: Մինչդեռ հենց Վրաստանը եւ Ուկրաինան էին համարվում ԱՊՀ-ից հեռանալու առաջին հավակնորդները:

Հավանաբար Ե՛ւ Սաակաշվիլուն, Ե՛ւ Վիկտոր Յուշչենկոյին, Ե՛ւ ԱՊՀ-ն լքել ցանկացող մյուս ղեկավարներին զգոնացրեց գագաթաժողովի նախօրեին կրեմլյան մի անանուն աղբյուրի հայտարարությունը, ըստ որի Ռուսաստանն արմատապես փոխելու է իր քաղաքականությունը հետխորհրդային տարածքում: «Նարնջագույն հեղափոխությունները» ոչ են փոխում ժողովուրդների կյանքը, փոխարենը նոր կառավարիչներից ոմանք աշխատավարձ են սանում ամերիկացիներից», շեշտել է բարձրաստիճան պաշտոնյան՝ ակնարկելով, որ Ռուսաստանը կարող է վերանայել ԱՊՀ երկրներին էներգակիրներ մատակարարելու նախկին քաղաքականությունը, երբ այդ երկրները երկու անգամ էժան են սանում, քան արեւմտյան պետությունները:

Բոլորին է հայտնի, որ Ուկրաինան գողանում է Եվրոպա առաքվող ռուսական գազի մի մասը, քանի որ խողովակաշարն անցնում է իր տարածքով, Բելառուսը ռուսական գազն սանում է գրեթե նույն գներով, ինչ ռուս սպառողը, անդրկովկասյան երեք հանրապետությունները եւ համաշխարհային գներից կրկնակի էժան են սարնում վառելիքը՝ չունենալով այլընտրանքային այլ խողովակաշարեր: Բավական է Կրեմլը որոշի փակել հետխորհրդային հանրապետություններ մտնող խողովակաշարերի փականը, եւ այդ երկրները կկանգնեն լուրջ ճգնաժամի առաջ, իսկ այնտեղ իշխող առաջնորդներին կսպառնա ներքաղաքական պայթյունի վտանգը: Թերեւս այս գիտակցությունն է ԱՊՀ գունավոր եւ ավտորիտար առաջնորդներին հետ պահում ԱՊՀ-ից դուրս գալու՝ ռուսական ազդեցության գոտուց վերջնականապես հեռանալու մտադրությունից:

ՎԵՆԵՍՈՒԵԼԱ-ԱՄՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Վենեսուելան կձգտի հասնել ավեստրանչական Ռոբերտսոնի արտաքսմանը

Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը հայտարարել է, որ իր կառավարությունը բոլոր օրինական գործողությունները կձեռնարկի, որպեսզի մարդասպանության կոչ արած ավեստրանչական քարոզիչ Փեթ Ռոբերտսոնն արտաքսվի ԱՄՆ-ից:

Չավեսը մտադիր է Ռոբերտսոնին դատել, քանի որ նա Սպիտակ տանը խորհուրդ է տվել սպանել Վենեսուելայի նախագահին: «Պետության ղեկավարի սպանությունն ահաբեկչական քայլ է», ընդգծել է նախագահ Չավեսը Ռոյթեր գործակալությանը տված հարցազրույցում:

Առանձնապես հույս չունենալով, թե ԱՄՆ-ն ինքնակամ կհանձնի «մարդասպան» քարոզչին, Չավեսը մտադրվել է միջազգային կառույցների, մասնավորապես ՄԱԿ-ի միջոցներն օգտագործել ավեստրանչական Ռոբերտսոնին Կարակաս բերելու համար:

Բացի դրանից, նախագահն իր հնարավոր սպանության համար նախօրոք մեղադրել է անձամբ Ջորջ Բուշին, ինչպես սպառնացել է այլեւս նավթ չառաքել ԱՄՆ, եթե իր դեմ մահափորձ կատարվի:

Փեթ Ռոբերտսոնն արդեն հրապարակավ ներողություն է խնդրել իր խոսքերի համար՝ ասելով, թե ինքը լոկ փորձել է ԱՄՆ ղեկավարությանը պաշտպանել Ուգո Չավեսի մշտական հարձակումներից:

Պ. Ք.

Բաղդադում ամերիկացիներն սպանել են Ռոյթերի լրագրողներից մեկին

Բաղդադում կիրակի օրն աշխատանքի պահին գնդակոծվել է Ռոյթեր գործակալության նկարահանման խումբը: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ կրծքին չորս եւ գլխին մեկ գնդակ ստանալով՝ մահացել է գործակալության ինչյունային օպերատոր, 35-ամյա Վալիդ Խալեդը: Օպերատոր Հայդեր Քադեմը վիրավորվել է մեջքից: Ամերիկացի զինվորները կալանավորել են նրան:

Իրաքի ոստիկանության տվյալներով, Ռոյթերի նկարահանման խումբը գնդակոծման պահին Բաղդադի շրջաններից մեկում լուսաբանել է ոստիկանների եւ գրոհայինների հերթական բախումը: Քադեմի խոսքերով, իր եւ գործընկերոջ վրա ամերիկացի մի նշանառու կրակ է բացել մոտակա առեւտրի կենտրոնի տանիքից: Քադեմի երկու ուրիշ գործընկերներ, որոնք կալանավորվել եւ ապա ազատ էին արձակվել, պատմում են, որ ամերիկացիներն իրենց հետ վարվել են «ինչպես շների հետ»:

Իրաքի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչը լրագրողների գնդակոծման համար ուղղակի մեղադրել է ամերիկացի զինվորներին: Ամերիկյան հրամանատարությունը հայտարարել է, թե բանակային ստորաբաժանումները Բաղդադի հիշյալ շրջանում գնդակոծման պահին կատարել են «ահաբեկիչների խմբի վնասազերծման» մարտական առաջադրանք:

Իրաքի սահմանադրությունը կդրվի հանրաքվեի

Չնայած սունիների մահմեդականների դժգոհությանը, Իրաքի խորհրդարանը կիրակի օրն ընդունել է սահմանադրության նախագիծը: ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, ինչպես նաեւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը ողջունել են սահմանադրության ընդունումը եւ հույս հայտնել, որ հոկտեմբերի 15-ի հանրաքվեի ժամանակ իրաքցիները եւս կընդունեն:

Ֆրանսպրեսը մեջբերում է նախագահ Ջալալ Թալաբանիի հետեւյալ հայտարարությունը. «Եթե ժողովուրդն «այո» ասի, ապա կունենանք հիմնական օրենք: Հակառակ դեպքում կմշակենք մեկ ուրիշ սահմանադրություն»:

Խորհրդարանային բուռն քննարկումների ժամանակ սունիները դեմ էին արտահայտվել Իրաքի դաշնային կառուցվածքին առնչվող կետերին՝ ասելով, որ դրանք սպառնում են երկրի միասնականությանը: Այդտեղից, նրանք կարունակեն մասնակցել քաղաքական գործընթացին, որպեսզի հասնեն իրենց գաղափարների հաղթանակին:

Շիա վարչապետ Իբրահիմ Ջաաֆարին մամլո ասուլիսում սահմանադրության ընդունումը բնութագրել է «պատմական նվաճում»:

Պ. Ք.

Օմրի Շարոնը մեղադրվում է կաշառության մեջ

Իսրայելի արդարադատության նախարարությունը կիրակի օրը կաշառության պաշտոնական մեղադրանք է ներկայացրել վարչապետ Արիել Շարոնի ավագ որդուն՝ Օմրի Շարոնին: Վերջինս աջակողմյան «Լիկուդ» կուսակցության անդամ է, խորհրդարանի պատգամավոր: Կասկածներ կան, որ 1999 թ. ընտրությունների ժամանակ Օմրին երկու կեղծ հետազոտական հաստատությունների ստեղծման միջոցով գաղտնի ֆինանսավորել է հոր ընտրարշավը, երբ նա ձգտում էր դառնալ «Լիկուդի» առաջնորդ եւ Իսրայելի վարչապետ:

Հիշյալ երկու հաստատությունների միջոցով ընտրք 6 մլն շեքել (մոտ 1,3 մլն դոլար) է փոխանցվել Արիել Շարոնի հետ աշխատած անձանց: Այդ գումարը զգալիորեն գերազանցում է ընտրարշավի ֆինանսավորման համար Իսրայելի կառավարության հատկացած առավելագույն սահմանը:

Անցկացված նախաքննության ընթացքում Արիել Շարոնը հայտարարել է, թե փոխանցումները կատարվել են առանց իր գիտության: 2001 թ. Իսրայելի դատախազությունն արդեն քրեական գործ էր հարուցել, բայց Օմրի Շարոնը հրաժարվել էր ցուցմունքներ տալ: Քննիչներն այն ժամանակ չէին կարողացել անհրաժեշտ քանակությամբ հանցանքաններ հավաքել:

BBC-ն նշում է, որ Օմրի Շարոնին ներկայացված մեղադրանքները անսպասելի չեն: Գործը վաղուց էր հասունանում, եւ վարչապետի որդին արդեն ինքն է հրաժարվել պատգամավորական անձեռնմխելիությունից: Իսրայելցիներն ուշի-ուշով հետեւելու են, թե Օմրիի դատավարությունն ինչպես կանդրադառնա նրա հոր քաղաքական կարիերայի վրա:

Երանք գնացել են Կոմիտասի այգի

Եվ հեռուստատեսությունում, եւ գրականության ոլորտում այսօր գերակայում է փաստագրությունը: Եվ դա բնական է: Ժողովրդական հոկայական զանգվածները սոսկ տեղեկատվություն են ուզում, որովհետեւ իրենք գտնում են, որ առանց դժվարության կարող են վերլուծություններ կատարել: Եվ տպագրվող գրքերը, մասնավորաբար փաստագրական, վավերագրական բնույթի են: Հարցն այստեղ ներկայացվող նյութի կարեւորությունն է: Այս իմաստով անչափ հետաքրքրական ուսումնասիրություն է հրատարակել ՀՄԽ ՀԿ-ի «Բնօրրանի» խմբագրությունը: «Ես գնացի Կոմիտասի այգի. 1966, ապրիլի 24»: Այսպես է կոչվում ընդամենը 4 մամուլ ծավալով այս գիրքը, որը, սակայն, անչափ արժեքավոր գործ է, անշուշտ:

Հայ ժողովրդի համար 1965 թվականի ապրիլի 24-ը խիստ կարեւոր մի օր է, որը սոսկ օրվա մեջ չի պարփակվում ժամանակային իմաստով: Այդ օրը Խորհրդային Միության կազմի մեջ մտնող Խորհրդային Հայաստանում առաջին անգամ համաժողովրդական կարգով նշվեց Հայոց մեծ եղեռնի տարեդարձը: Սփյուռքահայ գաղութներում այս կամ այն չափով ոգեկոչվում էր մեր զոհերի հիշատակը: Սակայն բռնատիրական երկրում՝ Խորհրդային Միության մաս կազմող Հայաստանում իսկապես ոգու հզոր պոռթկում էր 1965-ի ապրիլի 24-ը: Այլեւս հոգու ճանապարհը բաց էր: Եվ պատահական չէր, որ հենց հաջորդ տարի՝ 1966-ին նույնպես մարդիկ պետք է հիշատակի օրը նշեին:

Այս անգամ ցույցեր ու միտինգներ չեղան: Հայ մարդը պարզապես գնում էր Երեւանի քաղաքային պանթեոն՝ Կոմիտասի հուշարձանին խունկ ծխելու: Խոնարհ ու անմեղ մի մտահղացում էր դա, սակայն դա եւս ըմբռնումով չընդունեցին տիրող իշխանությունները:

Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կարծիքով՝ «...1915 թ. ցեղասպանությունը ոչ թե Հայաստանի իշխանությունների, այլ ողջ հայ ժողովրդի խնդիրն է, եւ դա անտեսելը չափազանց դժվար է: Ցանկացած նահանջ այդ խնդրում կնշանակի, որ հայությունն ամբողջությամբ դեմ դուրս կգա իշխանություններին: Հետեւաբար, հնարավոր չէ մոռացության տալ ցեղասպանությունը: Որեւէ հայից չի կարելի ակնկալել, որ ասի, թե պատրաստ է ցեղասպանությունը մոռանալ»: Ու ահա այս մոռացության մոխրից փրկվելու ջանք է լրագրող-հրապարակախոս Գեղամ Քյուրումյանի կազմած եւ Ժոզեֆ Ավետիսյանի խմբագրած գիրքը:

Լեւոն Անանիկյան, Ռուբեն Սաքապետոյան, Գեղամ Քյուրումյան, Լեւոն Տեր-Պետրոսյան, 1966թ. մայիսի 1:

Գրքում անչափ հետաքրքրական հուշագրություններ ունեն Գեղամ Քյուրումյանը, լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր Ռուբեն Սաքապետոյանը, գրող-հրապարակախոս Տիգրան Գամաղելյանը, լրագրող-հրապարակախոս Լեւոն Անանիկյանը, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, լրագրող խմբագիր Հակոբ Ավետիսյանը, գրականագետ, դոկտոր, պրոֆեսոր Գեւորգ Բարդակչյանը, պատմաբանության թեկնածու Էդուարդ Բաղդասարյանը, լրագրող-հրապարակախոս Շահեն Հարությունյանը: Հրապարակված են նյութեր հայ ազգային-ազատագրական պայքարի առաջամարտիկներից, նկարիչ Հայկ (Հայկազ) Խաչատրյանի եւ Ստեփան Զահիկյանի մասին:

1966 թ. ապրիլի 24-ին մի խումբ երիտասարդներ այցելել են քաղաքային պանթեոն՝ իրենց հարգանքը հավաստելու Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Ցույց, ելույթներ, ճառեր չեն եղել: Միայն սփյուռքահայ ուսանողները երգել են Կոմիտաս... «...Արդեն բոլորվել էինք Կոմիտասի շիրմի շուրջը, հիշում է «Ազգ» թերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիսյանը, երբ հանկարծ հայտնվեց, ինչպես հետո իմացանք՝ Հայաստանի ներքին գործերի նախարարը՝ պարոն կոշիկներով, մաքուր եւ գեղեցիկ համազգեստով մի զինվորական, կարծեմ գեներալի կոչումով: Համակրելի մարդ թվաց մեզ: Հարցրեց՝ ինչ ենք ուզում անել եւ ստացավ մեր խմբի ինքնակոչ առաջնորդ Գեւորգ Բարդակչյանի բացատրությունը՝ ցանկանում ենք Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հարգել կոմիտասյան մի քանի շարական երգելով: Համաձայնություն տվեց եւ արագ, ինչպես եկել էր, մեկնեց, հեռանալիս չմոռանալով պատվիրել՝ միայն թե շուտ եւ հակիրճ...»:

Սակայն ներքին գործոց նախարարից հետո անմիջապես ներկայանում է Երեւան քաղաքի Լենինյան շրջանի միլիցիայի պետ, մայոր Սերգեյ Մաշիրոսյանը, որ սիրում է ուսանողներին հեռանալ: Ու, անգամ մի պահ չսպասելով, նա հրամայում է միլիցիոներներին եւ քաղաքացիական հագուստով իրավապահներին՝ «սրանց տանել»: Իհարկե, հրամանը կատարվում է, սակայն մինչ այդ նրանք ծեծկռտոցով, քարշ տալով տանում են երիտասարդ մի աղջկա՝ Մարգարիտ Թախթաջյանին (հետագայում նա ճանաչված երաժշտագետ է հռչակվում):

Կինո «Հայրենիքի» դիմաց գտնվող քաղմասում ձերբակալվածներին «տեսակավորում» են: Ներկայանում է մայոր Մարշիրոսյանը եւ քաղաքական «հզոր» զեկուցում կարդում: Ըստ Սերգեյ Մարշիրոսյանի «20-րդ դարում, ֆիզիկայի, տիեզերական նվաճումների այս դարում դեռ կան մարդիկ, ովքեր «Տեր ողորմեա» են երգում, աղոթում: Ո՞վ պիտի ողորմի ձեզ, ով պիտի խղճա: Եվ ինչ եք դուք ուզում, հո՞ղ...»: Եվ որպեսզի այլեւս ոչ ոք հող չուզի, սկսում են «բաշինկել», ինչպես հիշում է Լեւոն Անանիկյանը, «պրիկազըվայս» են անում «օս իմենի գոսուդարստվա»: «Բաշինկի» տակ են ընկնում տեղացի երիտասարդները: Սփյուռքահայերը փրկվում են այս ծեծուջարդից, որովհետեւ խելամտություն են անում իրենց երկրների դեսպանատների ներկայացուցիչներ պահանջել: Խորհրդային Միության մի պստիկ ծայրամաս Հայաստանի իշխանավորները, իհարկե, երեկոյան կողմ ազատ են արձակում սփյուռքահայ ուսանողներին՝ «շառից, փորձանքից հեռու»: Իսկ ահա տեղացի երիտասարդները լավ են ստանում:

Գրքում կարեւոր լուսանկարներից մեկը քաչալացրած գլուխներով չորս երիտասարդի լուսանկարն է՝ արված 1966 թ. մայիսի 1-ին: Լենինի անվան հրապարակով մայիսմեկյան ցույցի օրն անցնում են նաեւ խուզված գլուխներով, կեղծիներն օդում թափահարող Լեւոն Անանիկյանը, Ռուբեն Սաքապետոյանը, Գեղամ Քյուրումյանը եւ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Նրանց կալանից ազատել էին ժամանակից շուտ, 15 օրվա փոխարեն «մանր խուլիգանություն» որակավորումով, աշխատավորների համերաշխության համաշխարհային օրվա նախօրյակին:

Այս օրերի եւ խուզված գլուխներով երիտասարդների մասին հրաշալի է գրել Վարդգես Պետրոսյանն իր «Հայկական էսքիզներում»: Նա գրում է Երեւանի բանտապետի մասին (անունը՝ Մաթոս). «...Նա խոսում էր, իսկ ես նույն պահին տեսնում եմ խուզված գլխով մի տղայի, որ երեք օր առաջ պատմում էր ինձ, այո, այո՝ հենց նրա մասին: Մի քանի ամիս առաջ, Անկարա հասնելու ճանապարհին ես եղել էի Կարսում, որտեղ այս մարդն է ծնվել, նաեւ նրա մայրը: Հիշում եմ, երբ պատմում էի, նա լաց եղավ, թեպետ բանտում է աշխատում: Լաց եղավ: Իսկ խուզած գլխով տղան, որ մի քանի օր «հյուր» էր եղել նրա բանտում, ուրիշ բաներ էր պատմում: Պատմում էր նրա տված աղջկերի, հայհոյանքների, դաժանության մասին..»:

Հ. Ավետիսյանն իր հուշագրությունը վերնագրել է «Հիշաչար մի՛ լինեք»: Կներեք, բայց համաձայն չեմ: 1966 թ. ապրիլի 24-ը չպիտի մոռացվի (այս գրքի խնդիրն էլ հենց սա է): Իսկ եթե չի մոռացվում, ապա նման հուշը բնավ էլ բարի չի դառնում:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐՈՒՅՐ

Շնորհահանդէս նուիրուած Գրիգոր Քէօսէեանի Շ. Շահնուրի «Նամականի» Բ հատորին

Պոստոնի հայ մշակութային յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ շնորհահանդէս մը, նուիրուած վերջերս Գրիգոր Քէօսէեանի խմբագրութեամբ լոյս տեսած Շահան Շահնուրի «Նամականի»ի երկրորդ հատորին Ոտքընթաւնի մէջ: Գիրքը հրատարակուած է «Մայրենի» հրատարակչական կողմէ, մեկենասութեամբ տէր եւ տիկին Յակոբ Վարդիվառեանի:

Օրուան գլխաւոր բանախօս դոկտ. Գրիգոր Ծ. վրդ. Մազուստեանը հանգամանօրէն ծանօթացուց գիրքը իր բովանդակութեամբ եւ արժանիքներով: 228 էջնոց հատորը կը բովանդակէ 57 նամակ, ուղղուած երկու հանրածանօթ դէմքերու՝ հայրենի բանաստեղծ եւ վիպագիր Գուրգէն Մահարիի՝ 32 նամակ, եւ ամերիկահայ արձակագիր, խմբագիր եւ հասարակական գործիչ Անդրանիկ Անդրէասեանի՝ 25 նամակ:

Հոգեշնորհ բանախօսը նախ վեր առաւ ընդհանրապէս նամականիներու արժէքը հինէն ի վեր, անոնց մէկ գեղագոյն օրինակը նկատելով ամէն օր եկեղեցիներու մէջ կարդացուած Պօղոս Առաքեալի նամակներու ժողովածուն: Հայոց հին շրջաններուն նմանապէս անոնք իրենց կարեւորութիւնը ունեցած են, ինչպէս օրինակ, Գրիգոր Մագիստրոս իշխանին նամակները, ի միջի այլոց: Մեր օրերուն հրատարակուած նամականիներէն յիշեց մի քանի օրինակներ. Եղիա Տեմիրճիպաշեան, Վահան Թէքէեան, Հայաստանի մէջ սկսած գրական ժառանգութիւն շարքը, որ դժբախտաբար այժմ կասած է:

Մեծ գրողներու, արուեստագէտներու, մտաւորականներու, եկեղեցականներու նամակներու հրատարակութիւնը կարեւոր է բազմաթիւ կողմերով, անոնց ներկայացուցած վաւերագրային, տեսաբանական, պատմական, գրական եւ այլ արժանիքներով: Գրականութեան մէջ անոնք առանձին սեռ մը կը կազմեն, որ սակայն իբր այդ դեռեւս տեղ չէ գտած մեր մէջ:

«Մենք Շահնուրը ճանչցած ենք իր վէպին, պատմուածքներուն, գրադատական-տեսաբանական գրութիւններուն մէջէն. Գրիգոր Քէօսէեանի խմբագրած եւ ծանօթագրած հատորներուն շնորհիւ մեր ծանօթութիւնը կը զարգանայ եւ կը խորանայ», ըսաւ հայր Գրիգոր: Կարելիութիւնը կը տրուի «Նահանջ»ի հեղինակը ճանչնալու իր առօրեայով, մտորումներով, ուրոյն դատումներով, պոլսահայ բարբառով: Զարմացում կը պատճառէ անոր իմացական լայն աշխարհը, միջազգային գրական աշխարհին իր ծանօթութիւնները, հետաքրքրութիւններուն լայն ծիրը:

Գրիգոր Քէօսէեանի ծանօթագրական բաժինը իր մանրասար 82 էջերով կը հաւասարի կամ նոյնիսկ կանցնի առաջին բաժինը: Թիւով 332 լուսաբանութիւնները լուրջ եւ մանրակրկիտ պրպտումներու արդիւնք են: Նիւթին իր գիտութիւնը որոշէս Շահնուրի բարեկամ եւ թղթակից, մեծ եւ վստահելի նպաստ մը կը բերէ շահնուրագիտութեան: Կարգ մը նիւթերու իր բացատրութիւնները կը գրաւեն նոյնիսկ էջեր. օրինակ՝ Շահնուր-Շուշանեան հակամարտութիւն, կամ Շահնուր-Չօպանեան տարակարծութիւն:

«Ուրտ խօսք»է մը շատ աւելին էր, իր կարգին, Մխիթարեան միաբան հայր Ռափայէլ Անտոնեանի արտայայտութիւնը. «Սեղմ ուսումնասիրութիւն մըն էր ներկայացուածը, որ վեր կառնէ Գրիգոր Քէօսէեանի դիմագծին առանձնայատկութիւնները որպէս անձ եւ գրող, հիմնուելով անոր հրատարակած չորս հատորներուն վրայ, ինչպէս նաեւ իր անձնական ծանօթութեան: Եւ իր գնահատմամբ, Գր. Քէօսէեան կը վերարժեւորէ նամակագրութիւնը»:

Հանդիսավար պրն Արտաշէս Շըլլմեանի հրաւէրով օրդ. Նայիրի Պասալեան քաղուածքներ կարդաց հատորէն: Ջեռնարկը փակուեցաւ Գր. Քէօսէեանի շնորհակալիքով: Ան շեշտեց, թէ նման շնորհահանդէսներ միայն իմաստ եւ կարեւորութիւն կրնային ստանալ, որքան որ համեմատաբար յաջող էին հանրութեան մօտ հետաքրքրութիւն ստեղծել հանդէպ մեր գրականութեան եւ մշակոյթին:

ՌՈՒԲԵՆ ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ

Սյունիքի մարզում ապատում էին փառատոնի պատվիրակությանը

Շարունակվում է «Մեկ ազգ, մեկ մշակույթ» հիմնադրամի նախաձեռնած հանրապետական մշակութային փառատոնը՝ «Պահպանենք մեր մշակույթը» խորագրով: Մարզից-մարզ իրականանում է փառատոնի նպատակը՝ ազգային բազմաբնույթ մշակութային արժեքների ներկայացումը: Այս անգամ եռօրյա այցով փառատոնը հյուրընկալվեց Սյունիքի մարզում: Մինչ մարզ հասնելը, Վայոց ձորի տարածքում պատվիրակությանն աղ ու հացով դիմավորեցին, կազմակերպեցին կանգառհանգիստը: Կես գիշերով պատվիրակությանն աղ ու հացով, դիոլ-զուռնայով դիմավորեցին փոխմարզպետ Արա Դոլուկցը, Կապանի քաղաքապետ Արմեն Կարապետյանը, մարզպետարանի աշխատակիցները եւ բնակչությանը: Ուրախ շուրջպարից հետո մեքենաների շարասյունն ուղեւորվեց Կապան քաղաք: Հաջորդ օրը Կապանի երաժշտական դպրոցի դահլիճում կայացավ փառատոնի պատվիրակության կազմում ընդգրկված մշակութային գործիչների եւ համայնքի բնակչության հետ հանդիպում ու քննարկում: Հանդիպմանը բարձրացվեցին բազմաբնույթ հարցեր, որոնց պատասխանեցին «Թաքուլ Ալթունյանի անվ. երգի-պարի պետական անսամբլի» գեղ. ղեկավար Ժիրայր Ալթունյանը, Հայաստանի պարարվեստի միության նախագահ Վանուշ Խանամիրյանը, ՀԳՄ անդամ, գրող Լեւոն Բլբուլյանը, Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի պրոֆեսոր, դաշնակահարուհի Անահիտ Ներսիսյանը, աստմնմոդ Սիլվա Յուզբաշյանը, երգիչ Արսեն Գրիգորյանը եւ ուրիշներ: Հիմնադրամի գործադիր տնօրեն Թամարա Պողոսյանը շնորհակալություն հայտնեց մարզի ղեկավարությանը նման հետաքրքրական հանդիպում կազմակերպելու համար: Ջերմ ու մտերիկ հանդիպումից հետո հյուրերը ծաղկեպսակ դրեցին Արցախյան պատերազմի զոհերի հուշահամալիրին, մեկ րոպե լռությամբ հարգեցին հայ քաջերի անձնազոհ հիշատակը: Քիչ անց պատվիրակությունն այցելեց Գարեգին Նժդեհի

հուշահամալիրը եւ սրտիցակ ծաղիկներով զարդարեցին մեծ հայրենասերի գերեզմանը: Երեկոյան Կապանի մշակույթի լեփլեցուն դահլիճում կայացավ «Պահպանենք մեր մշակույթը» խորագիրը կրող փառատոնը, որը ողջույնի խոսքով բացեց Սյունիքի փոխմարզպետ Արա Դոլուկցը: Փառատոնին իրենց ողջույնի ուղերձն էին հղել այդ հողից ու ջրից սերված կոմպոզիտոր Կոնստանտին Օրբելյանը (Սան Ֆրանցիսկո) եւ Հայաստանի էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը: Մի քանի ժամ տեւած համերգային ծրագրում իրար էին հաջորդում մարզի բոլոր համայնքներից ընտրված լավագույն խմբերը, անհաս կատարողները Երեւանից ժամանած արվեստի գործիչների հետ: Իհարկե, փառատոնում հատուկ շնորհակալություն եւ երախտագիտության խոսքեր հնչեցին հովանավորներ «Մուլտի ագրո» ՍՊԸ-ի տնօրեն Ռոզա Ծառուկյանի, ՀՀ մշակույթի նախարարության եւ, իհարկե, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի, փոխմարզպետ Արա Դոլուկցի, Կապանի քաղաքապետ Արմեն Կարապետյանի եւ մարզի բնակչության հասցեին՝ ջերմ ու բարեկամական մթնոլորտ ու ընդունելություն կազմակերպելու համար: Փառատոնն ավարտվեց, սակայն ստացած տպավորությունները դեռ երկար կմնան սյունիքցիների սրտերում ու հիշողության մեջ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տոն, որ բոլորինս էր

Երևանյան թիմերը հաստատեցին իրենց գերազանցությունը

Ավարտվեց բասկետբոլի համահայկական առաջին մրցաշարը: Մրցումների վերջին օրը հայտնի դարձան տղամարդկանց մրցաշարի մրցանակակիրները: Առանց չափազանցության կարելի է փաստել, որ Երևանի ու Վալեյի թիմերի եզրափակիչ հանդիպումը մրցումների իսկական զարդը դարձավ: Անգիջում ու դրամատիկ պայքարում ընթացած մրցախաղը մինչև վերջ հաճելի լարվածության մեջ պահեց «Դինամո» մարզադահլիճում գտնվող հանդիսականներին: Բավական ժամանակ Վալեյի թիմը հավասարի մեջ առջևում էր ընթանում, նույնիսկ մի պահ միավորների տարբերությունը հասավ 13-ի: Սակայն, ի պատիվ երևանցիների, նրանք իրենց մեջ ուժ գտան փոխելու մրցակցության ընթացքը, աչքի ընկան դիպուկ նետումներով ու արժանի հաղթանակ տոնելով (68-59)՝ նվաճեցին չեմպիոնի տիտղոսը: Մրցանակային 3-րդ տեղը զբաղեցրին Գլենդեյլի բասկետբոլիստները, որոնք պարտության մատնեցին Թբիլիսիի թիմին:

Եզրափակիչ խաղից հետո խնդրեցինք Երևանի թիմի մարզիչ **Էդուարդ Հարությունյանին** իր տպավորությունները կիսել վճռորոշ հանդիպման ու մրցաշարի մասին. «Տրամադրված էինք հաղթանակի, եւ տղաներն ամեն ինչ ներդրեցին հաջողության հասնելու համար: Փառք ու պատիվ նրանց, հոգի ներդրեցին հաղթանակի համար: Ես վստահ էի տղաների ֆիզպատրաստության վրա, եւ թեեւ 13 միավորով զիջում էինք մրցակցին, համոզված էի, որ մեր ներուժը բավականացնելու է հաջողության հասնելու համար: Նաեւ տակտիկական փոփոխություններ կատարեցինք: Զգալով, որ մրցակցի հեռահար նետումները հաջող են ստացվում, անցանք անհատական պաշտպանության, ինչը դրական արդյունք տվեց: Անչափ ուրախ եմ հաղթանակի առթիվ: Համահայկական 3-րդ խաղերում էլ հաղթել էինք Վալեյի թիմին, իսկ ահա եզրափակիչում պարտվել էինք Գլենդեյլի բասկետբոլիստներից: Բասկետբոլի այս մրցաշարի ընդհանուր մակարդակն անհամեմատ բարձր էր նախորդներից: 16 թիմերից 9-10-ը մոտավորապես հավասար հնարավորություններով մեծ ներուժ ունեցող թիմեր էին»:

Մրցաշարի ավարտից հետո տեղի ունեցավ մրցանակակիր թիմերի եւ աչքի ընկած մարզիկների պարգեւատրման հանդիսավոր արարողությունը: 4-րդ անգամ անընդմեջ բասկետբոլի մրցաշարի չեմպիոն հռչակված Երեւանի կանանց թիմին (մարզիչ՝ Համլետ Առաքելյան) հանձնվեց գավաթը, իսկ բասկետբոլիստուհիները պարգեւատրվեցին ոսկե մեդալներով: 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրած Թեհրանի եւ Գյումրու թիմերի մարզուհիներին հանձնվեցին արծաթե եւ բրոնզե մեդալներ: Համապատասխան մեդալներով պարգեւատրվեցին նաեւ տղամարդկանց մրցաշարի մրցանակակիրներ Երեւանի, Վալեյի եւ Գլենդեյլի թիմերի բասկետբոլիստները:

Լավագույն խաղարկողի համար սահմանված անհատական մրցանակներին արժանացան Հասմիկ Մամիկոնյանը (Երեւան) եւ Կառլոս Հովհաննիսյանը (Գյումրի): Լավագույն պաշտպաններ ճանաչվեցին երեւանցի Լիանա Բաղդասարյանն ու թբիլիսցի Միխայիլ Զիկաշվիլին: Լավագույն կենտրոնականների համար մրցանակները հանձնվեցին Էթնա Եսայանին (Թեհրան) ու Թորոս Էսենյանին (Վալեյ): Էթնան ճանաչվեց նաեւ մրցաշարի լավագույն բասկետբոլիստուհի, իսկ տղամարդկանցից այդ մրցանակին արժանացավ Դավիթ Նավասարդյանը (Վալեյ): «Արդարացի խաղի» մրցանակները հանձնվեցին Թեհրանի կանանց եւ Գլենդեյլի տղամարդկանց թիմերին: 3 միավորանոց նետումներով լավագույն արդյունք ցույց տված Վարդտիի Ասատրյանը (Գյումրի, 45 միավոր) եւ Արին Ղարաբօղլին (Թեհրան, 93 միավոր) եւս հատուկ մրցանակների արժանացան: Լավագույն մարզիչներ ճանաչվեցին Երեւանի կանանց թիմի մարզիչ Համլետ Առաքելյանը եւ Գլենդեյլի տղամարդկանց թիմի մարզիչ Արթուր Ռումայան: Լավագույն մրցավարի մրցանակը հանձնվեց թեհրանցի Վրեժ Աբգարյանին: Հատուկ մրցանակով պարգեւատրվեց նաեւ մրցումների գլխավոր մրցավար Ժորա Բաղդասարյանը:

Մրցումների ավարտից հետո զրուցեցինք մեր գործընկերներից մեկի՝ Թբիլիսիի «Արեփկ» մանկական ամսաթերթի խմբագիր, նույնանուն հիմնադրամի փոխնախագահ **Ինգա Աղեկյանի** հետ:

- Երկրորդ անգամ եմ Երեւանում լուսաբանում բասկետբոլի մրցումները: Մրցաշարը շատ լավ էր կազմակերպված: Ցանկալի կլիներ, որ սփյուռքի ավելի մեծ թվով թիմեր մասնակցեին, հետագայում ավելի ընդլայնվեր Համահայկական խաղերի աշխարհագրությունը: Օրինակ, Հունաստանում հայկական մեծ համայնք կա, Ավստրալիայում եւս հիշ թիվ չեն կազմում հայերը: Նման մրցաշարերը սփյուռքի մեր հայրենակիցներին հնարավորություն են ընձեռում զգալու հայրենիքի ուժը: Իմ կարծիքով, Համահայկական խաղերը մեծ հետք կթողնեն առաջա սերնդի զարգացման վրա եւ կնպաստեն հայրենիքի հետ կապին: Շատերը ցանկություն ունեն տեղափոխվելու Հայաստան: Նրանցից մեկն էլ ավելցարահայ Դալալ Ավետիսյանն է: Դա երեւի Համահայկական խաղերի ամենամեծ դրական քայլն է: Օգտվելով առիթից, խորին շնորհակալություն եմ հայտնում Հայաստանի ներկայացուցիչներին, ովքեր աջակցեցին թբիլիսյան թիմերին՝ հոգալով ճանապարհածախսն ու բնակության հարցերը: Ուրախ եմ, որ այսպիսի հայրենիք ունեմ:

Հայ ծանրորդների հարուստ ավարը

Սոֆիայի մարզապալատը դարձել էր ծանրամարտի Եվրոպայի պատանիների եւ աղջիկների առաջնության մրցատեղի: Հայաստանի ներկայացուցիչների ավարը հարուստ էր: Աղջիկների մրցավեճում պատվո պատվանդանի առաջին եւ երրորդ աստիճաններին կանգնեցին գյումրեցիներ Մելինե Գալուզյանը (58 կգ) եւ Աննա Գովելյանը (46 կգ): Կրկին փայլեց 2004 թ. Եվրոպայի պատանիների եւ երիտասարդների չեմպիոն Տիգրան Մարտիրոսյանը: Նախկինում ճանաչված ծանրորդ, վաղամեռիկ Գետրգ Մարտիրոսյանի որդին երկամարտի 308 կգ (140 կգ+168 կգ) արդյունքով հռչակվեց չեմպիոն եւ արժանացավ ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի լավագույն մարզիկի համար սահմանած ոսկե մեդալին: 17-ամյա դյուցազնը դարձավ Հին աշխարհամասի 6 ռեկորդի հեղինակ: Նրա մարզիչն է հավաքականը գլխավորող Աշոտ Մխիթարյանը: Դավիթ Մուրադյանը (56կգ) երկրորդն էր, Ռուբեն Մամոյանը (50 կգ) եւ Արամ Անդրիկյանը (69 կգ) երրորդը: Օլիմպիական խաղերի չեմպիոն Օգսեն Միրզոյանի որդին՝ Առաքելը, 62 կգ քաշային մրցավեճում 4-րդն էր:

Հաղթողի հիմնական հավակնորդը «Չելսին» է

Հանրահայտ «Ուիլյամ Հիլլ» բուքմեյքերական ընկերությունը, ելնելով չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի վիճակահանության արդյունքներից, հրապարակել է մասնակից թիմերից յուրաքանչյուրի հաղթելու հավանականության գործակիցները: Ըստ այդ ընկերության, չեմպիոնների լիգայի մրցաշարում հաղթելու ամենամեծ հնարավորությունն ունի Լոնդոնի «Չելսին»՝ 5:1: Այնուհետեւ գալիս են «Բարսելոնը»՝ 6:1, «Միլանը»՝ 7:1, «Ռեալը»՝ 15:2, «Յուվենտուսը»՝ 8:2, «Մանչեսթր Յունայթեդը»՝ 10:1 եւ այլն: Չեմպիոնների ներկայիս գավաթակիր «Լիվերպուլի» հաղթելու հնարավորությունը գնահատվում է 22:1: Ամենացածր գործակիցը Նորվեգիայի չեմպիոն «Ռոսենբորգինն» է (500:1):

Բեռլուսկոնին Շեւչենկոյի որդու կնքահայրը կդառնա

Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին, որ նաեւ «Միլանի» նախագահն է, կդառնա Անդրեյ Շեւչենկոյի որդու՝ Զորդանի կնքահայրը: Վերջինիս կնքման արարողությունը կայանալու է սեպտեմբերի 29-ին՝ Անդրեյ Շեւչենկոյի ծննդյան օրը: Հետաքրքրական է, որ Զորդանը ծնվել է մեկ ամիս անց՝ 2004 թ. հոկտեմբերի 29-ին: Բեռլուսկոնին Շեւչենկոյին հավաստիացրել է, որ ինչպես «Միլանի» բոլոր հռչակավոր ֆուտբոլիստները, Շեւչենկոն էլ կմնա թիմում մինչեւ ֆուտբոլային իր գործունեության ավարտը:

Պարգեւների համար պայքարը վերսկսվեց

Մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 2-րդ փուլը, որում վեց թիմերն առաջին փուլում վաստակած «ոսկե» միավորներով կշարունակեն պայքարը մրցանակային տեղերի համար: Ճիշտ է, հաշվի առնելով միավորների տարբերությունը, կարելի է վստահորեն ասել, որ միայն 4 թիմեր են հավակնում մրցանակային տեղերին: Դա հաստատեց նաեւ երկրորդ փուլի մեկնարկային տուրը:

Երկրի չեմպիոն «Փյունիկն» առանց մեծ ջանքերի հաղթեց «Դինամո-Զենիթին»: Ողջ հանդիպման ընթացքում «Փյունիկը» զգալի առավելություն ուներ եւ կարողացավ ստեղծած գոլային պահերից հինգն իրացնել: Երկու գոլ խփեց Տիգրան Դավթյանը, մեկական անգամ աչքի ընկան Գետրգ Նոռանյանը, Վալերի Ալեքսանյանն ու Աղվան Մկրտչյանը:

Ի տարբերություն վերը նշված հանդիպման, «Կիլիկիայի» եւ «Միկայի» մրցավեճում գոլ չգրանցվեց: Խաղն աչքի չընկավ դիտարժանությամբ:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	11	7	4	0	21-4	25
2. Միկա	11	4	6	1	15-9	18
3. Բանանց	10	4	4	2	14-13	16
4. Էսբ.-Կոտայք	10	2	6	2	12-11	12
5. Կիլիկիա	11	1	4	6	10-20	7
6. Դին.-Զենիթ	11	1	2	8	8-23	5

Ռմբարկուները

Նշան Էրզրումյան	«Կիլիկիա»	11
Արայոմ Աղամյան	«Միկա»	8
Տիգրան Դավթյան	«Փյունիկ»	7

Թենիսիստները սկսում են մրցավեճը

Նյու Յորքի «Ֆլաշինգ Մեդոուզ» կորտերում իրենց մրցավեճն են սկսում թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնության պարգեւները վիճարկող թենիսիստները: Դա «Մեծ սաղավարտ» մրցանակի շարքին դասվող ընթացիկ մրցաշրջանի վերջին մրցաշարն է, որն այս տարի անցկացվելու է 125-րդ անգամ: Այնպես որ, ԱՄՆ-ի բաց առաջնությունն իր հեղինակությամբ չի զիջում Ուիմբլդոնի մրցաշարին: Աճել է նաեւ մրցանակային հիմնադրամը: Մենախաղի մրցումների ընդհանուր մրցանակային հիմնադրամը 11 մլն 380 հազար դոլար է, որից 1 մլն 100 հազարը կստանա հաղթողը:

Նշենք, որ ԱՄՆ-ի անդրանիկ բաց առաջնությունը կայացել է 1881 թ., որին մասնակցել են միայն տղամարդիկ: Նպատակը երկրի հարուստ բնակչությանը զվարճացնելն էր: Մրցումներն անցկացվեցին Նյուփորթում, որը հետագա 34 տարիներին դարձավ թենիսի խոշոր կենտրոն: Միայն 1887 թ.՝ վեց տարի անց, կանանց թույլատրվեց մասնակցելու առաջնությանը: Սակայն նրանք մրցում էին առանձին Ֆիլադելֆիայի կրիկետի ակումբի կորտերում: Միայն 1968 թ. սկսած ԱՄՆ-ի բաց առաջնության մասնակիցները մրցում են միասին: Այդ տարի 96 տղամարդիկ ու 63 կանայք վիճարկեցին մրցանակային 100 հազար դոլարը:

Ամերիկացի թենիսիստ Անդրե Աղասին հույս ունի, որ ԱՄՆ-ի բաց առաջնությունում տիրող յուրօրինակ մթնոլորտը կօգնի իրեն 3-րդ անգամ հաղթող ճանաչվելու: Այս տարի 35-ամյա Աղասին յուրօրինակ հոբելյան է նշում. նա 20-րդ անգամ կմեկնարկի ԱՄՆ-ի բաց առաջնություններում: Իհարկե, հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկը ավելցարացի Ռոջեր Ֆեդերերն է, որը մոտ է լեգենդար Զոն Մաքինրոյի ռեկորդը գերազանցելուն: Վերջինս մեկ մրցաշրջանում անցկացրած 85 հանդիպումներից շահել էր 82-ը, հաղթող ճանաչվել 13 մրցաշարում, որից 2-ը՝ «Մեծ սաղավարտի» մրցանակների համար: Առայժմ Ֆեդերերն անցկացրած 64 հանդիպումներից շահել է 61-ը եւ դարձել 9 մրցախաղի հաղթող: Նա լավագույնն էր ճանաչվել Ուիմբլդոնում, այժմ պետք է ձգտի հաղթել ԱՄՆ-ի բաց առաջնությունում

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հեռֆերով

ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

Տղամարդի՞կ, շա՛տ խայլեք

Մոսկովյան ծանոթներից մեկը գնացել էր ուռոլոգի մոտ: Բուժզննությունից հետո վերջինս ասել էր, որ նա կլիմախի մեջ է: Ծանոթս խիստ վիրավորվել էր. կնի՞կ եմ, ինչ է, որ կլիմախ ունենամ, ընդվզում էր նա, հայ չլիներ, աթոռը գլխին ջարդելու էի...

Իրոք, տղամարդուն բնորոշ է կարծես թե նրան այդքան անհարիր «կանացի» երևույթը: Երևանում եղած ժամանակ, վերհիշելով այդ «տխուր» պատմությունը, դիմեցի վաղեմի բարեկամիս՝ «Դիագնոստիկա» բժշկական միավորման բժիշկ-ուռոլոգ, Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ուռոլոգիայի ամբիոնի ասիստենտ, բժշկագիտության թեկնածու Միխայել Սահակյանին:

- Իզուր է ընկերդ այդպես բորբոքվել,- բարեհոգի ժպտաց բժիշկը,- ամենայն հավանականությամբ նա իր սեքսուալ տագնաপներով եկել է մասնագետի մոտ, վերջինս էլ նրա սարսափի «ջրաղացին» ջուր է լցրել: Բայց իրականում բժիշկն իրավացի է. ինչքան էլ խորթ հնչի, տղամարդիկ էլ են ունենում կլիմախի շրջան: 50-60 տարեկանում տեղի են ունենում հորմոնների եւ քանակական, եւ որակական փոփոխություններ. կանացի հորմոնները, որ երիտասարդ տղամարդկանց օրգանիզմում աննշան են, նրանց կյանքի երկրորդ-երրորդ փուլում ակտիվանում են եւ փոխում օրգանիզմի ֆիզիոլոգիական-հոգեբանական բնույթը: Եթե կանանց մոտ դա կարված է արգանդի փոփոխությունների հետ, ապա տղամարդկանց մոտ նկատվում է շագանակագեղձի գերաճ, մասնավորապես դա բարորակ կամ չարորակ ուռուցք: Մեր սեռի տարեց ներկայացուցիչներն իրենց ավելի անպաշտպան են զգում, դառնում են դյուրագրգիռ (օրինակ՝ որ ծանոթը), փնթփնթան, ավելի շատ են զգում կնոջ հովանու կարիքը եւ այլն: Այդ առական «կլիմախի» մեջ վարկաբեկիչ ոչինչ չկա:

- Ինչո՞ւ է այդքան փխրուն ու խոցելի շագանակագեղձը, ինչպես ասում են՝ տղամարդու երկրորդ սիրտը:

- Ոմանց համար՝ նույնիսկ առաջինը: Ցավոք, Առողջապահության համաշխարհային խորհրդի տվյալներով, աշխարհի բոլոր տղամարդիկ իրոք այս կամ այն տարիքում, այս կամ այն չափով տառապում են շագանակագեղձի հիվանդություններից՝ բորբոքումից մինչեւ ուռուցք: Այդ, ինչպես նշեցիք, փխրուն օրգանը, որն ունի սոսկ 25-50 գրամ քաշ, գտնվում է միզային եւ սեռական ուղիների խաչմերուկում, եւ դրանց շեղումներն անմիջապես ազդում են նրա վրա: Դա հետ մեկտեղ ուժեղ է հոգեբանական գործոնը. տղամարդիկ, բարձր գնահատելով իրենց առական ֆունկցիաների կատարելությունը, շատ անուշադիր են դրանց պահպանման հարցում եւ նվազագույն իսկ անհաջողության դեպքում խուճապի մատնվելով (միայն թե ոչ «այդ»), ավելի են խորացնում հիվանդությունը՝ բարդացնելով եւ իրենց, եւ բժիշկների կյանքը:

- Ըստ մոսկովյան մամուլի, իմպոտենցիան ջահելանում է: Մյուս կողմից, եթե հավատանք շռայլ գովազդներին, գրեթե բուժելի են դրա բոլոր տեսակները: Մրն է ճիշտ:

- Դժվար բուժելի է ողնաշարի ծանր վնասվածքների, հիպերտոնիայի, ճարպակալման, շաքարախտի հետեւանքով առաջացած անկարողությունը: Իսկ եթե դա վաղ հայտնաբերված ֆիզիոլոգիական, ինչպես նաեւ հոգեբանական զգացմունքային վնասվածքների պատճառով է, ապա հաղթահարելի է: Իրոք, մեր ժամանակներում ստեղծված են ուժեղ դեղամիջոցներ, որոնք տղամարդուն վերադարձնում են նրա արժանապատվությունը: Դրանում կարող եք համոզվել մեր կենտրոնում: Ինչ վերաբերում է իմպոտենցիայի ջահելացմանը... Ռուսաստանում երկու գործոն դրան շատ են նպաստում՝ հարբեցողությունը եւ թմրամոլությունը: Սեքսուալ կյանքի վրա, հատկապես կոմունիստական հասվածում կայուն կյանքով ապրած սերնդի շրջանում բացասական ազդեցություն ունեցան սոցիալ-քաղաքական բեկումները, որոնց հետեւանքով շատ տղամարդիկ կորցրին ինքնավստահությունը:

- Ուրեմն ինչպե՞ս պահպանենք այդ արժանապատիվ օրգանը:

- Պրոֆիլակտիկայով: Ամենակարեւորը՝ կանոնավոր ռիթմիկ սեռական հարաբերություններով, սեռական զսպվածությունը շագանակագեղձի ոխերիմ թշնամին է: Քանակի հարցում նորմա չկա, ամեն ինչ անհատական է՝ ինչքան սպասվում է: Իսկ եթե հարեւանիդ մոտ շատ ավելին է սպասվում, դա նրա խնդիրն է, ինչպես անեկդոտն է հուշում՝ դու էլ ասա, ասելով չէ:

Շատ կարեւոր է սնվելու, հանգստանալու կուլտուրան, որ, ավաղ, հայերիս վարքագծի թույլ կողմն է: Ես շատ խորհուրդներ կարող եմ տալ, բայց մեր տղամարդիկ ծույլ են դրանք կատարելու համար: Ուստի բավարարվում եմ մի «ամենահետաքրքիր» հանձնարարականով՝ շա՛տ խայլեք, տղամարդիկ, դա բնական մերսում է շագանակագեղձի համար: Երեկոյան սիրելի կնոջ հետ գնե մի երկու պտույտ կատարեք շենքամերձ տարածքում:

- Բժիշկ, դուք դա անո՞ւմ եք:

- Մի խոսեցնի, Աստված սիրես... (ծիծաղում է):

Բժիշկն էլ իսկական հայ տղամարդ դուրս եկավ:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա-Երեւան

ՀԲԸՄ նախագահը եւ Վալանսի քաղաքապետը քննարկել են հայ-ֆրանսիական հարաբերությունների հարցեր

Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանը Նյու Յորքում օրերս հանդիպում է ունեցել Վալանսի (Ֆրանսիա) քաղաքապետ Լենա Բալսանի հետ: ՀԲԸՄ գրասենյակում կայացած հանդիպման ժամանակ քննարկվել են ֆրանսահայերի հետ կապված եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

ՀԲԸՄ փարիզյան գրասենյակը տեղեկացնում է, որ տկն Բալսանը զգալի դեր է խաղացել Վալանսում հայկական ժառանգության կենտրոնի ստեղծման գործում: Հունիսի 11-ին բացված կենտրոնը նոր երեսպաք է Ֆրանսիայում եւ ամբողջ Եվրոպայում:

Կենտրոնում հնարավոր է ամբողջական տեղեկատվություն ստանալ ֆրանսահայերի պատմության, նրանց տարագիր կյանքի, ֆրանսիական հասարակությանը նրանց ինտեգրման վերաբերյալ: 1920 թվականից Վալանսում կա սփյուռ հայ համայնք, որն այսօր կազմում է քաղաքի բնակչության 10 տոկոսը:

1906 թ. հիմնված ՀԲԸՄ-ն շահույթ չհետապնդող գլխավոր հայկական կազմակերպությունն է աշխարհում: Հայկական ինքնությունն ու ժառանգությունը զարգացնելու եւ պահպանելու նպատակով միությունը մշակութային, կրթական եւ մարդասիրական գործունեություն է իրականացնում 23 երկրների մոտ 400 հազար հայերի շրջանում:

Պ. Ք.

Պուտինն այցելելու է Վրաստան

Վրացական «24 ժամ» օրաթերթը, վկայակոչելով Ռուսաստանի նախագահի օգնական Սերգեյ Պրիխոդկովին, հաղորդում է, որ ամենայն հավանականությամբ մինչեւ 2005 թ. վերջը Թբիլիսի կայցելի նախագահ Պուտինը: Ռուսաստանի նախագահի վերջին այցը Վրաստան տեղի է ունեցել 1994 թ.: Ռուսաստանի նախկին նախագահին մոտ կանգնած որոշ պատասխանատուներ իրենց հուշերում հիշում են, որ Բորիս Ելցինը Թբիլիսիի օդակայանում իջել էր հարբած եւ Շեւարդնաձեից պահանջել ռուսներին հանձնել Աբխազիայի Պիցունդա նավահանգիստը, որը Վրաստանը կորցրել էր 1993 թ.:

Հայր եւ որդի Դենքբաշները Բաքվում

Հյուսիսային Կիպրոսի չճանաչված հանրապետության արտգործնախարար Սերդար Դենքթաշը հոր՝ նախկին նախագահ Ռաուֆ Դենքթաշի հետ երկօրյա այցով ժամանել է Բաքու, հաղորդում է ադրբեջանական «Դեյ» ինտերնետային թերթը: Փաստորեն այս այցով սկսվել է ուղիղ հաղորդակցություն Լեֆկոշայի եւ Բաքվի միջեւ: Հուլիսի վերջերին իրականացվել էր Բաքվից թռիչք դեպի Կիպրոսի թուրքական հատված, որի ուղեւորները հիմնականում Ադրբեջանի պաշտոնական, գործարար եւ օրենսդիր շրջանակների ներկայացուցիչներ էին: Հայր եւ որդի Դենքթաշները ոչ պաշտոնական այցի ընթացքում հանդիպումներ են ունենալու նախագահ Ալիեւի, խորհրդարանի նախագահ Մուրթուզ Ալեսքերովի եւ արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ: «Ամբողջ կյանքում սպասում էի Ադրբեջան գալուն», լրագրողներին Հեյդար Ալիեւի անվան օդանավակայանում ասել է Ռաուֆ Դենքթաշը:

Ծեծկռտուք վրացական երկու գումարտակների միջեւ

Լույս երկուշաբթի գիշերը Գորիում տեղակայված Վրաստանի պաշտպանության նախարարության ռազմական կենտրոնում տեղի է ունեցել զանգվածային ծեծկռտուք, հաղորդում է Ինտերֆաքսը: Ծեծկռտուքին երկու կողմերից մասնակցել են 450 զինծառայողներ: Տասնյակ զինծառայողներ ստացել են լուրջ մարմնական վնասվածքներ, լսվել են կրակոցներ: Վրաստանի պաշտպանությունը դեռեւս մեկնաբանություններ չի տալիս կատարվածի առնչությամբ:

ՄԱՆՈՒՖՈՒՄ

Դրամավարկային տեղեկատու

Օգոստոսի 19-25-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան աճել է 5 մլրդ 214 մլն դրամով եւ օգոստոսի 25-ին կազմել 184 մլրդ 281 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվները (առանց սեփականաշնորհման միջոցների) աճել են 3 մլրդ 980 մլն դրամով, զուտ ներքին ակտիվները՝ 1 մլրդ 234 մլն դրամով:

Օգոստոսի 12-19-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածը նվազել է 2 մլրդ 104 մլն դրամով եւ օգոստոսի 19-ին կազմել 332 մլրդ 217 մլն դրամ: Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ նվազել է 1 մլրդ 825 մլն դրամով, կազմելով 119 մլրդ 667 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները նվազել են 2 մլրդ 701 մլն դրամով եւ կազմել 44 մլրդ 918 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդները նվազել են 34 մլն դրամով եւ կազմել 17 մլրդ 498 մլն դրամ: Արտարժույթով ավանդներն աճել են 2 մլրդ 456 մլն դրամով եւ կազմել 150 մլրդ 134 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդորում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 80 մլրդ 861 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ աճել են 1 մլրդ 688 մլն դրամով), ժամկետայինները՝ 69 մլրդ 273 մլն դրամ (աճը՝ 767 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Օգոստոսի 19-25-ն ընկած ժամանակահատվածում թողարկվել են 39-շաբաթյա 500 մլն ՊՊ՝ 3,3685 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, 52-շաբաթյա 2 մլրդ դրամի ՊՊ՝ 4,4181 տոկոս տարեկան եկամտաբերությամբ եւ 40-շաբաթյա 1 մլրդ 500 մլն դրամի ՊՊ՝ 3,3806 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Նշված ժամանակահատվածում կնքվել են 1,279,705,281 դրամի հակադարձ ռեպո-համաձայնագրեր՝ 3 տոկոս տարեկան եկամտաբերությամբ եւ մարվել 2,853,771,892 դրամի հակադարձ ռեպո-համաձայնագրեր՝ 3,75 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը մարել է 2 մլրդ 200 մլն դրամի ավանդ՝ տարեկան 1 տոկոս տոկոսադրույքով:

Արտարժույթի շուկա

Օգոստոսի 19-25-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքը արժեզրկվել է 2,86 տոկոսով՝ 464,37 դրամից հասնելով 478,03 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 47,193 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 469,26 դրամ:

Շաբաթվա ընթացքում ԿԲ-ը վաճառել է 800 հազ. ԱՄՆ դոլար՝ 477,82 դրամ փոխարժեքով:

<< ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ԳՀԱՇՁԲ - 05/60 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ կառավարությանն առնքեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կարիքների համար «ՀՀ կառավարությանն առնքեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի վարչական շենքի լուսամուտների եւ դռների պատրաստման եւ տեղադրման» աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1750.0 ՀՀ դրամ փոխանցել «Արդինինվեստբանկ» ՓԲԸ Հ/Հ 247010010343 «Կոմունախագիծ» ՓԲԸ -ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25 հանձնաժողովի քարտուղար Գ. Մարկոսյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 16:00:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ՄԲԱՇՁԲ - 05/140 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«2006թ ավտոճանապարհների եւ արհեստական կառուցվածքների հիմնանորոգման ծրագրով նախատեսված օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման» աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1200.0 ՀՀ դրամ փոխանցել «Արդինինվեստբանկ» ՓԲԸ Հ/Հ 247010010343 «Կոմունախագիծ» ՓԲԸ -ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. ՝ 28-93-25 հանձնաժողովի քարտուղար Գ. Հուրոյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 10:30:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Վեռուի Կենտրոն» ոչ առեւտրային կազմակերպությունը իրեն պատկանող Ս.Վեռուիի 23 հասցեում գտնվող 321 քառ.մ տարածքում փնթրանորոգման աշխատանքներ կատարելու նպատակով հայտարարում է մրցույթ:

Մրցույթին առաջարկները ընդունվում են ք. Երեւան Հր. Քոչարի 27 հասցեում («Վեռուի Կենտրոն» ՊՈԱԿ), գործող սեղմագրերի 30-ը, ժամը՝ 14:00:

Մրցույթը տեղի կունենա նույն օրը՝ ժամը 15:00-ին:

Մրցույթի պայմանները ծանոթանալու համար զանգահարել 27-65-94 հեռախոսահամարով:

«Վեռուի Կենտրոն» ՊՈԱԿ

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Ակիմ» ՍՊԸ-ն դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ **Տավուշի մարզի Ծաղկավան գյուղի տարածքում կառուցված «Ծաղկավան»** փոքր հիդրոէլեկտրակայանի էլեկտրաէներգիայի սակագնի սահմանման հայտով: Առաջարկվող սակագինը՝ 22,18 դր/կվտժ (ներառյալ ԱԱՀ):